Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

40

ՕՍԿԱՐ ՈՒԱՑԼԻ

ՀԷՔԻԱԹՆԵՐ

Թարգմ. անգլ. ԳԱՐԼԷՍ ՄԻՆՈՒՑԼԻՆԻ
Նախաբան Ս. ԿՈՐՈՆԻՆԻՆ

ՊՈՍԿՈՒ — 1920

ԱԳՀ
108

ՕՍԿԱՐ ՄԻԱՑԼԻ

ՀԷՔԻԱԹՆԵՐ

330

Թարգմ. անգլ. ԿԱՐԼՈՍ ՄԻԱՑԼԻՆԻՆ
Նախաբան Ռ. ԿԱՐՊԵՆԵՆԻ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՒ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ
ՄՈՍԿՎԱ—1920

108-492

Տպար.՝ Կենտր. Հայկ. Կոմիտ. Մոսկվա, Սրճեանական փ., 2

Типогр. Центральн. Армянск. Комит., Москва, Армянский пер., 2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԱԽԱԲԱՆ

«Օսկար Ուայլդի Հէքիաթները»
յօդուած Ա. Կարինեանի.

«ՀԻ ՔԻԱԹՆԵՐ»

ա. «Երջանիկ Պրինցը»
բ. «Սոխակն ու Վարդը»
գ. «Նապաստակ Հսկան»
դ. «Մսծնուէր Բարեկամը»
ե. «Նշանաւոր Ռոկէտը»

ՕՍԿԱՐ ՈՒԱՅԼԴԻ «ՀԻԱԹՆԵՐԸ»

Օսկար Ուայլդը ծնել է 1854-ին:
Նրա հայրը՝ Վիլեամ Ուայլդը համարել է յայտնի վիրաբույժ և եղել է անգլիական լորդ:

Վիլեամ Ուայլդը չափազանց «տարօրինակ» մարդ էր, որովհետև չէր նմանում ոչ սովորական լորդերին և ոչ էլ բժիշկներին: Անգլիական այդ

*) Կենսագրական տեղեկությունները քաղում ենք Чуковский. „Оскар Уайльд“ յոդուածից:

լորդը ըստ երևույթին այնքան էլ մեծ նշանակութիւն չէր տալիս իր «ազնւական» կոչումին:

Դա չափազանց անհոգ, շռայլ և հիւրասէր մարդ էր՝ զզգուած շորերով ու անշնորք դիմագծերով:

Տաղանդաւոր բժիշկ լինելով հանդերձ, Վիլեամ Ուայլդը երբէք չի սահմանափակւել իր առօրեայ բժշկական-պրակտիկական գործունէութեամբ: Նա զբաղւել է ստատիստիկայով և ազգագրութեամբ ու գրել է մի շարք յոդուածներ ամենատարբեր խնդիրների մասին:

Ուայլդի մայրը նոյնպէս ունեցել է «տարօրինակ» յատկութիւններ: Իրլանդական շարժումը նա պաշտպանել է միևնոյն եռանդով, ինչպէս և անգլիական արիստոկրատիայի հմայքը: Նա գրել է բանաստեղծութիւններ և թռուցիկներ ու կազմել է մի շարք գրքեր՝ Սկանդինաւիայի, ֆրանսական և իտալական յեղափոխութեան մասին: Սակայն տարօրինակ կերպով Վիլեամ Ուայլդի կինը հաշտեցրել է իր սենտիմենտալ—դեմոկրատական յոյզերը արիստոկրատական պրետենզիաների հետ: Իր ամուսնու լորդական նոր տիտղոսը նրա համար եղել է բաւականաչափ հմայիչ: Եւ Ուայլդի մայրը մեծ ուշադրութեամբ հետևելով պատանի Օսկարի դաստիարակութեան ձգտել է ստեղծել նրանից միանգամայն յղկած, անաղարտ և իսկական մի լորդ:

Յաջողե՞լ է արդեօք այդ:

Անշուշտ ընտանեկան միջավայրի ազդեցությունը որոշ կնիք է դրել Օսկար Ուայլդի վրայ: Նրա աքտաւորը էստետիզմը մեծագոյն չափով կազմակերպել է դեռ պատանեկական շրջանում: Ուայլդը իր հոր նման չէր: Նա հաղնում էր պարզ, բայց չափազանց լաւ: Արտաքին գեղեցկությանը նա մեծ նշանակություն էր տալիս. իրաքանչիւր մարդ պարտաւոր էր Ուայլդի տեսակէտով գեղեցիկ հագնուել...

Եւ Ուայլդի բոլոր հերոսները միշտ դուրեկան և գեղեցիկ են: Նրանք ունեն գեղեցիկ զգեստներ և սիրում են գեղեցկությունը: Իրական կեանքը անքնդունելի էր Օսկար Ուայլդի համար:

Իրական կեանքի կոշտությունը խափանելու նպատակով նա ստեղծում է ֆանտաստիքական տենչերի մի խիտ ցանց, նկարագրում է միշտ արտաւորը և գեղեցիկ հեռուներ...

Այդպէս է Ուայլդը իր այնքան յայտնի «Դորեան Գրէյի Պորտրէտ» վէպի մէջ:

Պարադոքսներով լեցուն այդ վէպը բնորոշում է Ուայլդի էստետիքական ամբողջ աշխարհայեցողությունը:

Եւ միանման պարադոքսներով լի են նաև նրա մնացեալ գործերը: Չնայած դրան Ուայլդի բոլոր հերոսները՝ և՛ Դորեան Գրէյը, և՛ Սալոմէն, և՛ Լէդի Վինդէրմիրը միանգամայն իրական դէմքեր են, որոնք բոլորն էլ ունին իրական մարդկային

տենչեր և յոյզեր: Ուայլդի մեծ ոյժը հէնց նրանումն է, որ նա կարողանում է իրական դարձնել ամենատարօրինակ ծգտումներն և տենչերը: Նրա Սալոմէն այլ կերպ չէր կարող լինել:

Նրա Դօրեան Գրէյը իրական է էր բոլոր տարօրինակութիւններով հանդերձ: Նրա Լորդ Արտուրը բնական է և «իսկական»:

Մի՞թէ «տարօրինակ» չէր հէնց ինքը—այդ արտասովոր պարադօքսների և ֆանտաստիքական դրուագների հեղինակը:

Արիստոկրատական էստետիզմի այդ երկրպագուն միաժամանակ էր նաև սոցիալիզմի, ապագայ սոցիալիստական հասարակակարգի ջատագով: Ինդիվիդուալիզմի ամենացայտուն այդ ներկայացուցիչը դառնում է միաժամանակ խեղճերի և տառապողների երգիչ:

Ինչպէ՞ս բացատրել այդ հակասութիւնը: Ուայլդի կենսագրողներից մէկը, Զուկովսկին տրամադիր է կարծելու, որ Ուայլդի բոլոր հակասութիւնները մեծաղոյն չափով կապուած են նրա անցեալի հետ: Արդէն մանկութիւնից նա, ստացել է որոշ ժառանգութիւն: Եւ ելնելով այդ հիմնակէտից ռուսական իմպրեսիոնիստ-քննադատը հմտօրէն և տաղանդաւոր կերպով նկարագրել է անգլիական մեծ գեղագէտի բարդ կենդանագիրը:

Սակայն նրա քննութիւնը հետաքրքրական լինելով հանդերձ ամենևին չի բացատրում Ուայլդի

իբրև ինքնակ «սոցիալիստական» տենչերի իրական պատճառը: Ռուսական քննադատի համար Ուայլդը ժամանակից և սոցիալական միջավայրից կտրված մի անհատ է միայն:

Այնինչ սոցիալական ուրոյն միջավայրը կոչել է իր ինքնայատուկ դրոշմը Ուայլդի ստեղծագործության վրայ: Եւ հէնց այդ միջավայրն էլ ստեղծել է անգլիական մեծ դեղագէտին:

Իր ապրումներով Ուայլդը մոտ չի եղել ո՛չ անգլիական բուրժուազիային և ո՛չ էլ պրոլետարիատին: Նրա համար օտար են եղել անգլիական արիստոկրատիայի զոռոզ դէմքը և դատարկ հոգին, արդիւնաբերական բուրժուազիայի ագահ և դրամատենչ ձգտումները: Սակայն նա երբէք չի կարողացել ըմբռնել և հասկանալ նաև պայքարող ու մարտնչող պրոլետարիատի իդէալը:

Ուայլդը գրել է մի քանի չափազանց ընտրոյթ յօդուածներ և դիտողութիւններ: Այդտեղ նա ամենասուր կերպով խարազանել է հին աշխարհի խարխուլ իդէոլոգիան: Նա նկարել և երգել է նոյնիսկ սոցիալիզմը:

Սակայն այդ սոցիալիզմը նկարագծել է չափազանց իբրևնակ կերպով: Ուայլդի տեսակէտով սոցիալիստական աշխարհում անհատը պիտի վայելի լիակատար ազատութիւն: Այլ կերպ արևակայել սոցիալիզմը նա անկարող է:

Ուայլդը ինքը ինտելիգէնտ է բառիս բուն իմաս-

տով: Եւ որպէս մի ինտելլիգէնտ, որ կապուած է բուրժուական հասարակակարգի հետ, որ ստացել է այդ կարգերից որոշ ժառանգութիւն, որոշ տրադիցիաներ և սովորութիւններ նա չի կարող կտրել դրանցից վերջնականապէս: Նա ցանկանում է, որ ապագայ հասարակութիւնը տայ նրան բոլոր վայելքը, բոլոր գեղեցկութիւնը առանց այն աշխատանքի, որին նա ընդունակ և սովոր չէ:

Իհարկէ Ուայլդը խորապէս հաւատացած է, որ այդպէս է նաև հաւայն պրոլետարիատի, բոլոր աշխատաւորութեան երազը: Ուայլդը կուռդ, գործարանային բանւորներին չի տեսել: Նա տեսել է միայն ցնցոտիների մէջ պարուրուած միշտ խեղճ աղքատներին և թշուառներին, այլ ոչ այն ուժգեղ դարբիններին և մարտիկ-հանքահաններին, որոնց երգել են մեծ պօէտ՝ Վէռհարէնը և մեծ բանաստեղծ Մէօնիէն...

Ուայլդը ժառանգել է սոցիալական խնդրին, որպէս բուրժուազիայից կտրուած քաղքենի ինտելլիգէնտ: Այդ կողմից նա յիշեցնում է անգլիական այն ինտելլիգէնտներին որոնք դասակարգային ներհակութիւններին վերջ տալու համար դիմում են տիրողներին, և դրանց վեհանձնութեանը ապաւինում: Այդպէս է անգլիական սոցիալիստական այսպէս կոչուած «Ֆաբիանական ընկերութիւնը»: Այդպէս էր նաև անգլիական յայտնի սոցիալիստ-ուտոպիստ Վիլիամ Մորրիսը, որը նոյնպէս ստեղծել է սոցիալիստա-

կան հասարակակարգի մի դարդանկարված պատկեր...

Ուայլդը կապված է հէնց այդ ինտելլիգէնտների, տիրողների զաւակների, նախկին բուրժուաների, իրենց դասակարգային մեղքերը «քաւող» բուրժուաների հետ։

Նկատելով աշխատաւորների տանջանքը և Թըշուառների տառապանքը անգլիական այդ ինտելլիգէնտները հեռանում և կտրւում են իրենց «հայրեր»-ից և «քաւում» են իրենց հայրերի «մեղքերը»։

Այդ կողմից ակնարկած սոցիալիստները յիշեցնում են ռուսական նարոդնիկներին, որոնց շարքերում նոյնպէս ուժեղ էին այն ինտելլիգէնտները, որոնք գործելով ժողովրդի համար «քաւում» էին իրենց «հայրերի» դասակարգային «մեղքերը»...

Էստէտ Ուայլդի, արիստոկրատ և դէնդի Ուայլդի հոգու մէջ ևս կար այդ զգացումը, այդ իւրօրինակ էթիքական կէնսահայեցողութիւնը, որը այնքան ինքնայատուկ գոյներով արտացոլւել է նրա առաջին «Հէքիաթներ»-ում...

Այդ «Հէքիաթներ»-ը լոկ մանկական հէքիաթներ չեն։

Ուայլդը ստեղծել է գեղարուեստական այնպիսի դրուագներ, որոնք ֆանտաստիքական լինելով հանդերձ, չափազանց պարզ են և հասարակ։ Բայց այդ

պարզությեան մէջ կայ իւրօրինակ ոյժ։ Իզուր չէ ասուած, որ պարզ ղրելը ամենադժուար արուեստն է։

«Դօրեան Գրէյի» ստեղծագործողը «հէքիաթներ»-ում աւելի ինտիմ է, աւելի մտերիմ և անկեղծ։ Այդտեղ նա կարծես քաց է անում, մերկացնում է իր հոգու ամենանուիրական անկիւնները։

Եւ մենք տեսնում ենք, որ «էստէտ» և «արիստոկրատ» Ուայլդը հին աշխարհի փարիսեցիական մօրալի ամենամեծ հակառակորդն էր, որ նրա համար «մաքուր գեղարուեստը» սրբութիւն սրբոց չէր, որ նա խոր զգացումով էր դիտում ճնշուած տարրերի ծանր կեանքը։

«Երջանիկ Պրինցը» և «Սոխակն ու Վարդը» — այդպէս են կոչւում նրա առաջին ժողովածուի հիմնական դրուագները։ Պրիմիտիւ «դէմոկրատներին» կարող են սարսափեցնել այդ վերնագրները։

Սակայն նա ով կմօտենայ աւելի մօտ «Հէքիաթներ»-ին կտեսնէ, որ Ուայլդի բոլոր այդ ֆանտաստիկական էսկիզները ունին իրենց որոշ իմաստը, իրենց հիմնական իդէան... Այն, ինչ որ ասում է առաջին գլխում — յետագայ հէքեաթներում ևս դրում է այլ և տարբեր ձևակերպումներով...

Մեղմ ու հատու լեզուով անգլիական մեծ դեղադէտը նկարում է «Երջանիկ Պրինցի» այն ծոխ արծանը, որը փայլում էր իր ադամանդներով և Ոանկագին քարերով։ Գեղեցիկ էր համարում այդ արծանը բոլորի կողմից...

Սակայն ահա մի առ մի ազատում է պրինցը իր արդուզարդից: Մի առ մի, կտոր-կտոր քանդում է նա իր բոլոր զարդարանքները խեղճերին և տառապողներին օգնելու համար:

— „Երբ ես կենդանի էի, և ունէի մարդկային սիրտ, ես չգիտէի, թէ ի՞նչ է արտասուքը, որովհետև ես ապրում էի անհոգ ապարանքում, ուր վիշտը մուտք չունէր: Ցերեկները ես խաղում էի իմ ընկերների հետ այգու մէջ, իսկ երեկոները՝ ղեկավարում պարերը Մեծ Սրահում: Այգու շուրջը բարձր պատնէշ էր քաշած, և ես երբէք չհետաքրքրուեցի հարցնել՝ ի՞նչ կար նրա յետևը՝ շուրջս ամեն ինչ այնքան սքանչելի էր“...

Այդպէս էր «Երջանիկ Պրինցը» առաջ։

Բարձր պատուանդանից դիտում է նա մեծ քաղաքի կեանքը, տեսնում է իր քաղաքի բոլոր այլաղակութիւններն ու թշուառութիւնները և նրա սիրտն այրում է...

Ու նա համոզում է զէպի հեռու հարաւային երկրները սլացող ծիծեռնակին օգնել իրեն, քանդել մի առ մի իր զգեստը և օգնութիւն հասցնել տառապողներին...

Եւ կատարելով այդ խնդիրը վերջանում ծիծեռնակը զոհւում է...

... „Մինչև լոյս նա նստեց Պրինցի ուսերի վրայ ու պատմեց՝ ինչ տեսել էր օտար երկրներում։ Նա պատմեց նրան կ-բմիր իբիսներից, որոնք

երկար կարգերով ջարում են Նեղոսի ափերին ու կտուցներով ոսկէ ձկնիկ որոնում. սֆինքսից, որը հին է, ինչպէս ինքը՝ աշխարհն ու ապրում է անապատում ու գիտէ ամեն ինչ. վաճառականներից, որոնք քալում են հանդարտ իրենց ուղտերի հետ, սաթէ տէրողորմեան ձեռներին։ Լուանէ Լերան Թագաւորից, որը սև է, ինչպէս եբենոսի փայտը, ու երկրպագութիւն է տալիս մի խոշոր բիւրեղի, կանաչ մեծ օձից, որ քնել է արմաւենու վրայ ու քսան բուրմ է պահում, որ իրեն մեղրահաց տան. Թզուկներից, որոնք նաւորդում են մեծ լճի մէջ, խոշոր, տափակ տեբևների վրայ նստած ու մեշտ կռիւ մղում Թիթեռնիկների հետ...

— Սիրուն, փոքրիկ ծիծեռնա՛կ, ասաց Պրինցը,— դու ինձ պատմում ես զարմանալի արարածներից, սակայն ամեն ինչից աւելի զարմանալին՝ մարդկային տառապանքն է։ Աւելի մեծ խորհուրդ, քան Գշւառութիւնն է, գոյութիւն չունի: Սաւառնի՛ր, իմ քաղաքի վրայով, փոքրիկ Ծիծեռնակ, ու պատմիր ինձ քո տեսածը։

Ու սաւառնեց Ծիծեռնակը մայրաքաղաքի վրայով ու տեսաւ հարուստներին զուարճանալիս իրենց սքանչելի ապարանքներում, ժինչդեռ աղքատները նստել էին դարպասների առաջին։ Նա Թռաւ ներդ փողոցներն ու տեսաւ անօթի երեխաների գունատ դէմքերը՝ անտարբեր դէպի մուռ փողոցները յառած աչքերով»...

Ոչ մի հրապարակախօսութիւն, ոչ մի «քաղաքացիական» բանաստեղծութիւն չի կարող ունենալ այն իւրօրինակ ազդեցութիւնը, ինչ որ ունի Ուայլդի այդ հէքիաթը:

Այդտեղ աւելորդ խօսքեր և կեղծ շեշտեր չկան։ Բացակայում է այն սենտիմենտալ շաղակրատութիւնը, որի ամենամեծ սրբահարներն են հայ նորագոյն բանաստեղծներից շատ շատերը։ Բայց կայ խոր զգացում, ուժեղ շեշտ և արտասովոր մի գեղեցկութիւն ամբողջ կառուցուածքի մէջ:

Ուայլդը իր այդ հէքեաթում երևան է գալիս որպէս նոր կրօնի և նոր ճշմարտութեան մունետիկ: Իզուր չէ նա հէքիաթի վերջում գնում քաղաքային երկու տիրակալների, երկու խորհրդատուների տաղտկալի դէմքերը, որոնց առաջարկով տապալուում է մերկացած Պրինցի արձանը։

— «Քանի որ նա այլևս գեղեցիկ չէ, հետևապէս օգտակար էլ չէ, ասաց գեղագիտութեան Պրոֆեսորը Համալսարանում»...

Չենք կանգնում Ուայլդի մնացեալ հէքեաթների վրայ, որոնցից մի քանիսը նկարագրուած են միևնոյն պարզ և ազդու շեշտերով, համակուած են միևնոյն էթիքական կենսահալեցողութեամբ։

Իր հին մեղքերը «քաւում» է «Երջանիկ Պրինցը» յանուն Թոյլերի և Թշուառների, յանուն բազմաթիւ տառապողների։

Իր մեղքերը «քաւում» է և «Եսասէր Հսկան»

Ու հէքիաթներում գծ.ում է տառապանքի ներքին գեղեցկութիւնը ու վեհանձնութեան հմայքը:

Այդ հէքիաթներում, երևում են «ճշտառները» որոնց օգնելով ամեն որ երջանկանում և գեղեցկանում է:

Դա է Ուայլդի նոր հաւատամքը, նրա էստէտիքական-բարոյական կրօնը։

Եւ իհարկէ նրա այդ համոզումը կապուած է ամենասերտ կերպով այն կենսահայեցողութեան հետ, որը ստեղծել է քաղքենի ինտելիգէնտների որոշ շրջանում ժամանակակից միջավայրում։ Կուի կոչել «ճշտառներին» այդ ինտելիգենտները չեն վատահանում որովհետև դասակարգային հակամարտութեան նրանք հակառակ են: Սակայն նրանք չեն կարող նաև հաշտուել տիրող կարգերի հետ, որովհետև իշխողների և՛ կեանքը, և՛ մորալը և՛ էստէտիկան նրանց համար անընդունելի է։

Կան գործեր և երկեր, որոնք միշտ ունին իրենց ուրոյն յեղափոխական իմաստը։

Այդ երկերի հեղինակները յաճախ կապուած են հին սեփականատիրական կարգերի հետ: Սակայն շնորհիւ բարձր գեղարուեստական տաղանդի նրանց յաջողուել է ոչ միայն շեշտել որոշ յեղափոխական էտապներ և դրամատիքական մօմենտներ այլ և ստեղծել ընդհատ տենչեր: Այդպէս են օրին, Վիկ

տոր Հիւգոյի՝ «Գլուռները», «Ինն տ-ն և երեքը» կամ Շիլլերի՝ «Աւազակներ»-ը կամ Ֆլորերի՝ «Սենտիմենտալ դատարակութիւնը» և այլն և այլն: Դրանք, այդ հեղինակները ոչ տոգեբանիստներ են և ոչ էլ յեղափոխականներ։ Սակայն այդ գեղագէտները չեն կարողացել և չեն ցանկացել հաշտուել տիրող կարգերի, հնացած մօրալի և բարացած նորմաների հետ: Եւ դրանցից իւրաքանչիւրը ցուցադրել է ցայտուն կերպով իր բացասական վերաբերմունքը դէպի հին հասարակութիւնը և հին կարգերը: Ու ամեն մէկը ստեղծել է այդ կարգերի դէմ կուող ապստամբների և գործիչների բնորոշ և հետաքրքրական պօրտրէտներ: Ամեն մէկը, և՛ Հիւգոն, և՛ Շիլլերը, և՛ Ֆլոբէրը խիտ գոյներով և ուժեղ զգացումով արտայայտել է իր բնաւորական ոգին...

Այդ պատճառով նոյնիսկ այժմ և այսօր այդ մեծ գեղագէտների գործերը այժմէական են։ Նրանց գործերը բացի ներքին գեղարուեստական յատկութիւններից ունին առանձին արժէք ևս: Նրանց երկերը մօտ են մեր օրերի սերունդին, որովհետև գունաւորուած են որոշ ազատական ոգով։

Այսպէս են որոշ չափով նաև Ուայլդի առաջին «Հէրիաթներ»-ը։ Նրբահնչիւն այդ դրուագները ունին նոյն իսկ մեր օրերում դատարակչական որոշ արժէք։

Մեծ անգլիական պօէտը պրոլետարական երգիչ

չէր և ոչ էլ յեղափոխական։ Բայց նա հին հասարակութեան, ժամանակակից սեփականատիրական կարգերի, քաղքենիական մօրալի և աշխարհայեցողութեան ամենալծռական հակառակորդն էր։ Ու իր այդ վերաբերմունքը նա չի ծածկել։

«Հէքիաթներ»-ից իւրաքանչիւրը «քաղաքացիական» իր իմաստն ունի։ «Հէքիաթներ»-ը մի աւելորդ անգամ, խարազանում են սոցիալական ներհակութիւնների և դասակարգային հակամարտութեան վրայ հիմնուած հասարակութեան բացասական էութիւնը։ Միւս կողմից Ուայլդը գծում է ընկերական ալտրուիստական ոգու մեծ էթիքական արժէքը.. Ուայլդը այդ նկատի չի ունեցել։ Գուցէ նա այլ մտայղացումներով է տոգորուել։ Կարելի է նոյնիսկ ասել, որ նա «Հէքիաթների» ստեղծագործութեան ժամանակ ևս մնացել է ինդիվիդուալիստ։ Սակայն իրապէս նա, ինչպէս յաճախ պատահում է, ստեղծել է այնպիսի գրուագներ, որոնք ունեցել են միանգամայն այլ արժէք և նշանակութիւն...

Դրանով պիտի բացատրել այն, որ Ուայլդի թէ այդ «Հէքիաթները» և թէ նրա յայտնի «Ռէդինգեան Բանդի Բալլադը» սիրելի են ոչ միայն Ուայլդի «էստէտ» երկրպագուների, այլ և ամենալայն ժողովրդական ու բանւորական աուդիտորիայի համար։

Ա. ԿԱՐԻՆԵԱՆ

ԵՐԿԱՆԻԿ ՊՐԻՆՑԸ

ԵՐՋԱՆԻԿ ՊՐԻՆՑԸ

Քաղաքից վեր, բարձր կոմսության վրայ, կանգնած էր Երջանիկ Պրինցի արձանը։ Նա զարդարված էր մաքուր ոսկու թիթեղներով, աչքերի տեղ ունէր երկու վառ-լուն շափյուղայ, և մի խոշոր, կարմիր սուտակ շողում էր նրա թրի գլխատակի վրայ։

Անչափ գրանցելի էր նա։

— Գեղեցիկ է, ինչպէս հողմացոյցի արքաղաղը, նկատեց քաղաքային խորհրդաւորներից մէկը, որը տենչում էր գեղագէտի համբաւ ձեռք բերել — Միայն ոչ նրա չափ օգտաւէտ, աւելացրեց նա, վախենալով, թէ մի գուցէ հասարակու թիւնը համարի նրան անդրծնական։ և նա այդպէս էլ չէր։

— Ինչո՞ւ նման չես Երջանիկ Պրինցին, հարց տուեց մի խելամիտ մայր իր փոքրիկ տղային, որ անհոգատակ լալիս էր։

— Երջանիկ Պրինցի մարքուզն անպամ չի անցնում, որ մի որևէ բանի համար լայ։

— Ես զոհ եմ, որ աշխարհիս երեսին դոնէ մի երջանիկ մարդ կայ, մրթմրթաց մի հիասթափուած մարդ, աչքերը յառելով սքանչելի արձանին։

— Նա ուղղակի հրեշտակի է նման, ասացին Ռբբանոցի երեխաները, երբ դուրս եկան Եկեղեցուց ալ-կարմիր ուսնոցներով և մարքուր, սպիտակ գոգնոցներով։

— Ի՞նչ գիտէք, ասաց Մաթեմատիկայի ուսուցիչը.— դուք հրեշտակ երբէք չէք տեսել։

— Ո՜հ, մենք տեսել ենք երազներում, պատասխանեցին երեխաները. և Մաթեմատիկայի ուսուցիչը յօնքերը կիտեց ու դէմքը խոժոռեց, որովհետև նրա դուրը չեկաւ, որ երեխաները երազ են տեսնում։

Մի գիշեր քաղաքովը մի փոքրիկ ծիծեռնակ թռաւ։ Նրա ընկերները չուել էին Եգիպտոս եօթ շաբաթ առաջ, իսկ նա յետ էր մնացել, որովհետև սի-

բահարուել էր մի գեղեցիկ Եղէգի վրայ։ Նա նրան հանդիպել էր վաղ գարնան, երբ նա մի մեծ, դեղին թիթեռնիկի չեռեիցը ընկած դէպի գետը թռաւ, և այնպէ՞ս էր դրաւուել նրա նրբին իրանով, որ մնաց նրա հետ սիրաբանելու։

— Արդեօք, չսիրե՞մ ես քեզ, ասաց Թիթեռնակը, որը սիրում էր խօսքից անմիջապէս գործին անցնել, և Եղէգը նրան խոր գլուխ տուաց։ Ապա նա նրա չորս կողմը թռիչքներ գործեց, դիպաւ իր թևերով ջրի երեսին ու արծաթէ կոհակներ հանեց։ Դա նրա սիրաբանութիւնն էր, որ տևեց ողջ ամառը։

— Ա՜յ տարօրինակ սէր, շշնջացին մեւս Թիթեռնակները։— Չէ՞ որ նա մի գրոշ փող չունի, իսկ ազգականներ՝ անթիւ անհամար։ Եւ, իրաւ, ողջ դեռը լիքն էր եղէգներով։ Ապա, երբ եկաւ աշունը, ամենքը թռան անցան։

Այնուհետև, երբ նրանք չուեցին, Թիթեռնակը իրեն մենակ զգաց ու սկսեց ձանձրանալ իր սիրուհուց։

— Նրա բերանին լեզու չկայ, ասաց նա։— և ես վախենում եմ, որ նա պրճրուտի լինի, որովհետև միշտ քամու հետ սիրաբանությունն է անում։

Եւ, ճիշտ որ, ամեն անգամ, երբ քամին փչում էր, Եղէգը նազանքով լի բևեռանանք էր անում։

— Ընդունում եմ, որ նա անուսէր է, շարունակեց նա։— բայց ես սիրում եմ ճանապարհորդությունն անել, հետևապէս, լմ կլինի էլ պիտի սիրի ճանապարհորդությունը։

— Կուզե՞ս չուենք միասին, ասաց նա վերջապէս Եղէգին. բայց Եղէգը շարժեց իր գլուխը՝ նա շա՞տ էր կապուած իր տան հետ։

— Դու ինձ հետ խաղ ես արել, բացականչեց Ծիծեռնակը։ Ես մեկնում եմ դէպի պիրամիդները։ Մնա՞ս բարով։ Եւ նա թռաւ անցաւ։

Ամէն օրը նա թռաւ և գիշերը հասաւ քաղաքը։

Ո՞ւր իջնեմ, ասաց նա։ Ես հաւատա-

ցած եմ, որ քաղաքում պատրաստու-
թիւն են տեսել ինձ ընդունելու համար։
Ցանկացած նրա աչքումն ընկաւ բարձր
կոթողի վրայ կանգնած արձանը։

— Հէնց այստե՛ղ կիջևանեմ, բացա-
կանչեց նա։—դիրքը գեղեցիկ է և օդը
բաւականին թարմ։

Ու նա թառեց ու նստաւ Երջանիկ
Պրինցի ոտների առաջում։

— Ես ոսկէ ենջարան ունիմ, շշնջաց
նա ինքն իրեն, երբ շուրջը նայեց ու
պատրաստուեց քնելու։ Հէնց որ զրուխն
ուզում էր դնել իր թևի տակ, ջրի մի
խաշտ կաթիլ վրան ընկաւ։

— Սա՞ ինչ տարօրինակ բան է, բա-
ցականչեց նա։—երկնքումն ամպի կտոր
չկայ, ասող�՝ ջինջ ու պայծառ է,
չնայած դրան, անձրև է գալիս։ Իշտ-
որ, հիւսիսային Եւրոպայի կլիման ան-
ստանելի է։ Եղէգն անձրև էր սիրում,
բայց դա նրա համակրութիւնիցն էր։
Ցեռոյ ընկաւ մի նոր կաթիլ։

— Ի՞նչ օգուտ մի արձանից, երբ նա

չի կարողանում ինձ անձնից պատապարել, գոչեց նա.— դնում ծխնելոյզի մի լաւ ծածկոց դանեմ։ Ու նա վեռեց հեռանալ այդտեղից։

Սակայն, մինչև նրա թևերը արձակելը, ընկաւ մի երրորդ կաթիլ էլ, նա վեր նայեց ու տեսաւ... Ո՞հ լի՞նչ տեսաւ։

Երջանիկ Պրինցի աչքերը լիքն էին արտասուքներով, և արտասուքները գլորւում էին նրա ոսկեզօծ այտերից։ Նրա դէմքը այնքա՞ն դեղեցիկ էր լուսնի շողերի տակ, որ Ծիծեռնակի խիղճը շարժեց։

— Ո՞վ ես դու, ասաց։

— Երջանիկ Պրինցն եմ։

— Ինչո՞ւ ես լալիս, ապա. հարցրեց Ծիծեռնակը։ Դու ինձ ծիմ-ծիմ թռչեցիր։

— Երբ ես կենդանի էի, և ունէի մարդկային սիրտ, պատասխանեց արքայը, ես չդիտէի, թէ լի՞նչ է արտասուքը, որովհետև ես ապրում էի Sans—Souci*) ապարանքում, ուր վիշտը մուտք չունէր։ Ցանկները ես խաղում էի իմ ըն-

*) Sans-Souci՝ անուն։

կերների հետ այգու մէջ, իսկ երեկոները ղեկավարում պարերը Մեծ Սրահում։ Այգու շուրջը բարձր պատնէշ էր քաշած, և ես երբէք չհետաքրքրուեցի հարցնել՝ ի՞նչ կար նրա յետևը՝ շուրջս ամեն ինչ այնքա՞ն սքանչելի էր։ Իմ պալատականները անուն դրին Երջանիկ Պրինց, և, իսկապէս, ես երջանիկ էի, եթէ հաճոյքը երջանկութիւն է։ Այսպէս ես ապրեցի, այսպէս էլ վախճանուեցի։ Եւ, այժմ, երբ ես մեռած եմ, նրանք ինձ դրին այստեղ, այնքա՞ն բարձր, որ ես կարողանում եմ տեսնել իմ քաղաքի բոլոր այլանդակութիւններն ու թշուառութիւնները, և, թէև իմ սիրտը արճճից է շինած, այնուամենայնիւ, ես չեմ կարողանում զբաղել իմ արտասուքները։

— Ինչպէ՞ս, մի՞թէ նա ձոյլ ոսկուց չէ, ասաց Ծիծեռնակն ինքն իրեն։ Նա այնքան քաղաքավարի էր, որ բարձր ձայնով անձնական նկատողութիւն չէր անի։

— Այնտեղ, հեռու, շարունակեց արքանը մեղմ, քաղցրալուր ձայնով,—այնտեղ

հետու, մի ապքաո տուն կայ։ Պատուհաններից մէկը բաց է և ես կարողանում եմ տեսնել սեղանի կողքին նստած մի կին։ Նրա դէմքը նիհար է ու փոխա, ձեռները կոպիտ ու կարմրաներկ, ասեղներով ծակծկած, որովհետև նա կար անող է։ Նա անուսնամիկ է ապրում։ Թագուհու շքախմբի ամենաչքնաղ օրիորդներից մէկի կերպասէ հագուստի վրայ՝ առաջիդայ պալատական պարահանդէսին հագնելու համար։ Սենեակի անկիւնում, մահճակալի վրայ, հիւանդ պառկած է նրա փոքրիկ որդին։ Նա տաքութեան մէջ է և խնդրում է, որ մայրը իրեն նարինջ տայ։ Իսկ մայրը, դեռաւորից բացի, ուրիշ ոչինչ չունի նրան տալու, ու նա լալիս է։ Ծիծեռնա՛կ, Ծիծեռնա՛կ, դու փոքրի՛կ Ծիծեռնակ, չե՞ս տանի դու նրա համար թռիս դատակի վրայի տուտակը։ Ամենքս ամբաստանուած ենք այս պատանեկանին, և ես տեղից չեմ կարող շարժուիր։

— Ինձ Եգիպտոսում ասում են,

ասաց Ծիծեռնակը.— Իմ ընկերները Նեղոսի վրայ չեն ու առաջ են թռչում ու պրուցում փարթամ լոտոսների հետ։ Շուտով նրանք քնելու կերթան Մեծ Արքայի դամբարանը։ Այնտեղ հանգչում է ինքը, թագուորը իր նկարազարդ դագաղի մեջ։ Նրան պարուրել են գեղին քաթանի մեջ և զմրուխտ անուշահոտ խոտերով։ Նրա պարանոցին բաց կանաչագույն տապաքարէ շղթայ է ձգուած, և նրա ձեռները նման են թոշնած տերևների։

— Ծիծեռնա՛կ, Ծիծեռնա՛կ, դու փոքրի՛կ Ծիծեռնակ, ասաց Պրինցը.— Չե՞ս մնայ ինձ հետ մի գիշեր ևս ու չե՞ս լինի իմ սուրհանդակը։ Տղան այնքա՜ն ծարաւ է և մայրը՝ այնքա՜ն տրտում։

— Չեմ կարծում, որ Էրեխանները ինձ համար սիրելի լինեն, պատասխանեց Ծիծեռնակը։ — Անցեալ ամառ, երբ ես դեռ փոքր էի տպրում, երկու գաժան տղայ կար՝ ջաղացպանի որդիները, որոնք միշտ քարեր էին նետում գէպի ինձ։ Նրանք

երբէք ինձ չէին դիպչում, իհարկէ. մենք, Ծիծեռնակներս, կերած-կորած չենք, մանաւանդ որ իմ ցեղն էլ յայտնի է իր ճարպիկութեամբ. յամենայն դէպս դա նրանց կողմից անպատկառութիւն էր։

Սակայն Երջանիկ Պրինցը այնքան որխուր տեսք ունէր, որ փոքրիկ Ծիծեռնակի դուրը շարժեց։

— Այսօրվ շատ ցուրտ է, ասաց նա, բայց և այնպէս ես կՁեամ մի գիշեր ես և կլինիմ քո սուրհանդակը։

— Շնորհակա՛լ եմ, փոքրի՛կ Ծիծեռնակ, ասաց Պրինցը։

Ու հանեց Ծիծեռնակը իր կտուցով Պրինցի թրից խոշոր սուտակը և, կտուցին բռնած, ոլացաւ ու անցաւ քաղաքի տանիքների վրայով։

Նա անցաւ մայր եկեղեցու գմբէթի կողքով, ուր սպիտակ, մարմարէ հրեշտակներն են քանդակագործուած։ Նա անցաւ պալատի մօտով ու լսեց պարահանդէսի աղմուկը։ Մի չքնաղ կոյս զուրս եկաւ պատշգամբն իր սիրահարի հետ

— Ի՞նչ սքանչելի են սատգերը, սատց սիրահարը կոչին.— և ինչքա՞ն սքանչելի է սիրոյ ոյժը։

— Ցոյս ունեմ իմ հարդուսը մինչև Պալատական պարահանդէսը պատրաստ կլինի, պատասխանեց կոչը։— Ես պատւիրել եմ, որ վրան անուաճաղիկներ սանդնադրծեն, իսկ կաք անուղներն այնքա՞ն ծոյլ են։

Նա անցաւ դեպի վրայով ու տեսաւ նաւերի կայմերից կախած լապտերները։ Նա անցաւ Գետոյի*) վրայով ու տեսաւ ծեր Հրէաներին միմեանց հետ առևտրական պայմաններ կապելիս և պրոնձէ կշեռքների վրայ դրաճներ քաշելիս։ Վերջապէս նա հասաւ աղքատիկ տնակն ու ներս նայեց։ Մանուկը տարքութեան մէջ թաւալուում էր անկողնումը, և մայրը խոր քնել էր՝ այնքա՞ն նա յոգնած էր։ Նա ներս թռաւ ու խոշոր առատակը դրեց սեղանի վրայ, կնոջ մատանոցի կողքին։ Ապա զգուշութեամբ թռչ-

*) Գետտո—Հրէական թաղ առնասարակ։

ուսից մահճակալի շուրջն ու իր թեւերով հովահարեց մանուկի նախատը։

— Ինչքա՞ն դժվարյալ ես, ասաց ոգուն։

—Ուրեմն ես կլուանամ, ու խորտուդուց քաղցը քնի մէջ։

Ապա Ծիծեռնակը դարձաւ դէպի երջանիկ Պրինցն ու պատմեց նրան՝ ինչ որ արել էր։

— Ա՜յ քեզ տարօրինակ բան, նկատեց նա։—Այժմ ծիտերգամանչն ինձ տաք եմ զգում, թէև այսպէս ցուրտ է։

— Դա նրանից է, որ դու բարի գործ ես կատարել, ասաց Պրինցը։ Ու փոքրիկ Ծիծեռնակը սկսեց մտածել և ապա քնեց։ Մտածմունքը միշտ նրան քուն էր բերում։

Երբ օրը բացուեց, նա թռաւ դէպի գետը ու լողաց։

—Սա ի՞նչ տարօրինակ երևոյթ է, ասաց թռչնաբանութեան Պրոֆէսորը կամրջով անցնելիս։—Ձմեռը Ծիծեռնակ։

Եւ նա մի երկար նամակ գրեց դրա մասին տեղական թերթում։ Ամենքը ցի-

տասներ հանեցին այդ նամակից, որովհետև նամակը լի էր այնպիսի խոսքերով, որոնց իմաստը չէին կարողանում հասկանալ։

— Այս գիշեր ես մեկնում եմ դեպի Եգիպտոս, ասաց Միմեոնակը, և այդ հեռանկարը նրա սրամտությունը բարձրացրեց։ Նա այցելեց բոլոր հրապարակային արձանները և երկար ժամանակ նստեց եկեղեցու գանգրատան մոտ։ Ուր գնում էր՝ ճանապարհները ծլլում էին ու սուտ միմեանց։

— Սա ի՞նչ անուանի օտարական է։— Եվ դա նրան մեծ հաճույք էր պատճառում։

Երբ մայրն լսեց, նա վերադարձավ դեպի Եբչանիկ Պրինցը։

— Ունիս որև է պատուէր Եգիպտոս տանելու, բացականչեց նա։—Ես խոսքն մեկնում եմ։

Միմեոնա՛կ, Միմեոնա՛կ, դու փոքրի՛կ Միմեոնակ, ասաց Պրինցը։—Ո՞ւս կարող ես ծառս մի գիշեր ես

— Ինձ ապառում էն Եղիպտառում, պատասխանեց Միմեոնակը,—վարդ իմ ընկերներք պիտի թռչին դեպի Նեղոսի երկրագործ Զրվեժը։ Օդնուեղ, հողդներին մեջ, պառկել է դեռատձին, և մի մեծ գրբանիտե դահի վրայ բազմել է Մեմեոն Աստուածը։ Ողջ գիշերը նա գիտում է աստղերը, և երբ ծագում է լուսատորը՝ նա բերկրանքից աղաղակում է ու ապալում։ Կէսօրին դեղին առիւծները դեռատին են իջնում ջուր խմելու։ Նրանց աչքերը կանաչ ծովաքարերի են նման և նրանց մռնչիւնը ուժեղ է, քան Զրվեժի մռնչիւնը։

Միմեոնա՛կ, Միմեոնա՛կ, դու փոքրի՛կ Միմեոնակ, ասաց Պրինցը,—հեռու քաղաքի ծայրին, մանարդում*), ուսանում եմ մի երիտասարդ։ Նա կռացել է թղթերով ծածկուած գրասեղանի վրայ, և նրա մօտ, բաժակի մէջ դրած է թառամած մանուշակների մի փունջ։ Նրա մազերը դարչնագոյն են ու գանգուր և նրա

*) Մանարդ—տանիքի տակը սենեակ։

շրթունքները կարմիր են, ինչպէս նուռը և աչքերը խաղող են ու խոհուն: Նա աշխատում է վերջացնել իր պիեսը թատրոնի Կառավարչի համար, սակայն դրա համար չափից դուրս ցուրտ է: Բուխարու մէջ կրակ չկայ, և քաղցը ապառել է նրա ոյժը:

Ես կՄնամ քիչ մօտ մի գիշեր ևս, ասաց Ծիծեռնակը, որն իսկապէս մի լաւ սիրտ ունէր:

Մի սուտակ էլ նրա՞ համար տանեմ:

— Աւա՜ղ, ես այլևս սուտակ չունիմ, ասաց Պրինցը.—եղած չեղածս՝ աչքերս են: Նրանք շինուած են հազուագիւտ շափիւղաներից,՝ բերած Հնդկաստանից հազար տարի սրանից առաջ: Կտուցովդ հանիր դրանցից մէկը և տար տուր նրան: Նա կծախի այդ ակնավաճառին և ուտելիք ու վառելիք կգնի ու կվերջացնի իր դրուածքը:

— Սիրելի՛ Պրինց, ասաց Ծիծեռնակը.—ես անկարող եմ այդ անել. ու սկսեց լալ:

— Միժեռնա՛կ, Միժեռնա՛կ, դու փոքրի՛կ Միժեռնակ, ասաց Պրինցը.—Կասարի՛ր, ինչ հրամայում եմ քեզ։

Ու Միժեռնակը հանեց կառուցով Պրինցի աչքն ու թռաւ դէպի ուսանողի մանսարդը։ Միանգամայն հեշտ էր ներս մտնելը, որովհետև տանիքը ճեղքուած ունէր։ Նա այդտեղից ներս ցատկեց ու մրտաւ սենեակը։ Երիտասարդը առել էր գլուխն ափերի մէջ, ուստի չլսեց թռչունի թռիչքի ձայնը և, երբ աչքերը բարձրացրեց՝ իր թառամած մանուշակների մէջ մի սքանչելի շահիւղաջ դտաւ։

— Սկսում են արդէն ինձ գնահատել, բացականչեց նա.—Երևի սա մի որևէ խոշոր երկրպագու է ուղարկել։ Հիմա որ նա կաւարտեմ իմ պիեսը, ու նրա դէմքը փայլեց երջանկութիւնից։

Հետևեալ օրը Միժեռնակը թռաւ դէպի նաւահանգիստ։ Նա նստեց մի մեծ նաւի կայմի վրայ ու սկսեց դիտել, թէ ինչպէս նաւատորները թոկերով նաւահարշից մեծ-մեծ արկղներ են դուրս քաշում.

— Քաշէ՞ք, վե՞ր, գոչում էին նրանք ամեն մի արկղը հանելիս։

— Ես մեկնում եմ դէպի Եգիպտոս, բացակաչեց Միծեռնակը. սակայն ոչ ոք ուշք չդարձրեց նրա վրայ, ու, երբ ծագեց լուսինը, նա յետ թռաւ դէպի Երջանիկ Պրինցը։

— Եկել եմ քեզ մնաս բարով ասելու, բացականչեց նա։

— Միծեռնա՛կ, Միծեռնա՛կ, դու փոքրիկ Միծեռնակ, ասաց Պրինցը.—Չե՞ս մնայ մօտս մի գիշեր ևս։

— Արդէն ձմեռ է, պատասխանեց Միծեռնակը.—Եւ շուտով սառը ձիւն կգայ այստեղ։ Եգիպտոսում տաք արևը շոյում է կանաչ արմաւենիներին, և կոկորդիլոսները պառկել են տղմի մէջ ու ծոյլ-ծոյլ նայում են չարս կողմը։ Իմ ընկերները բուն են շինում Բահալբէկի*) Տաճարում և վարդագոյն ու սպիտակ աղաւնիները նայում են նրանց ու մեղմում։

*) Սիրիայում մի քաղաք է, որ յայտնի է Արևին նուիրած մի հսկայական ռամպարով։ Այժմ աւերակ։

— Սիրելի՛ Պրինց, ես պիտի գնամ, իսկ քեզ երբէք չեմ մոռանայ և եկող գարնան քեզ համար կբերեմ երկու անդին քար՝ առաւծներիդ փոխարէն։ Առատը կլինի աւելի կաքմիր, քան կարմիր վարդը և շափիւզան կլինի կապոյտ, ինչպէս անհուն ծովը։

— Ներքև, սկսեցաւ, ասաց Երջանիկ Պրինցը, մի փոքրիկ լուցկէվաճառ աղջիկ կայ։ Նրա լուցկիները առուի մէջ են ընկել ու փչացել։ Հայրը կծեծի նրան, եթէ նա փող չբերի տուն, և նա լալիս է։ Նա ոչ կոշիկ ունի և ոչ էլ գուլպայ, և նրա փոքրիկ գլուխը բաց է։ Հանի՛ր իմ մեւս աչքը և տո՛ւր նրան, ու հայրը նրան չի՛ ծեծի։

— Ես կմնամ քեզ մօտ մի գիշեր ևս, ասաց Ծիծեռնակը.—բայց քո աչքերը չեմ կարող հանել։ Դու միանգամայն կոյր կմնաս։

— Ծիծեռնա՛կ, Ծիծեռնա՛կ, դու փոքրի՛կ Ծիծեռնակ, ասաց Պրինցը.—Սրա՞ ինչ քեզ հրամայուած եմ։

Եւ հանեց նա Պրինցի միւս աչքն ու թռաւ։ Նա պացաւ լուցկէվաճառ աղջկայ հագքով ու գրեց անդին քարը նրա ոտքի մէջ։

— Ի՜նչ գեղեցիկ ապակու կտոր է, բացականչեց փոքրիկ աղջիկը. և նա, ծիծաղը դէմքին, վազեցաւ տուն։

Ապա Ծիծեռնակը եկաւ Պրինցի մօտ։

— Այժմ դու կոյր ես, ասաց Պրինցը, այսուհետև ես կմնամ քեզ մօտ ընդմիշտ։

— Չէ՛, փոքրի՛կ Ծիծեռնակ, ասաց Պրինցը, դու պէտք դնաս Եգիպտոս։

— Քեզ մօտ պէտք մնամ ընդմիշտ, ասաց Ծիծեռնակն ու քնեց նրա ականջի տակ։

Հետևեալ օրը մինչև լոյս նա նստեց Պրինցի ուսերի վրայ ու պատմեց՝ ինչ տեսել էր օտար երկրներում։ Նա պատմեց նրան կարմիր իբիսներից*), որոնք երկայն կարգերով շարուած են Նեղոսի ափերին ու կտուցներով ոսկէ ձկնիկ որոնում. ֆինքսից, որը հին է, ինչպէս

*) Իբիս—Եգիպտական արագիլ։

ինքը՝ աշխարհն ու ապրում է անապատում ու չիտէ ամե՛ն ինչ. վարուագանները, որոնք քայլում են հանգարտ լրենց ուղտերի հետ, սաթէ տէրտերական ձեռներին. Լուսնէ Լերան թագաւորից, որը սև է, ինչպէս Երենոսի փայտը, ուերկրպագութիւն է տալիս մի խաշոր բիւրեղի. կանաչ մեծ օձից, որ քնել է արմաւենու վրայ ու քսան քուրմ է պահում, որ իրեն մեղրահաց տան. ֆզուկներից, որոնք նաւարդում են մեծ լճի մէջ, խաշոր, տափակ տերևների վրայ նստած ու միշտ կռիւ մղում ֆիլֆեռնիկների հետ։

— Սիրուն, փոքրիկ Ծիծեռնա՛կ, ասաց Պրինցը,—դու ինձ պատմում ես զարմանալի աբարածներից, սակայն ամենից աւելի զարմանալին՝ մարդկային տառապանքն է։ Աւելի մեծ Խորհուրդ, քան Շուտասուութիւնն է, գոյութիւն չունի Սատանի՛ր իմ քաղաքի վրայով, փոքրի՛կ Ծիծեռնակ, ու պատմիր ինձ քո տեսածը։

Ու տաւառնեց Միմեռնակը մայրաքաղաքի վրայով ու տեսաւ հարուստներին դուարճանալիս իրենց աքանչելի ապարանքներում, մինչեռ աղքատները նստել էին դարպասների առաջին։ Նա թռաւ նեղ փողոցներն ու տեսաւ անօթի երեխաների դուռնատ դէմքերը՝ անտարբեր դէպի մութ փողոցները չառած աչքերով։ Գամբջի կամարի տակ երկու փոքրիկ մատուռ փաթաթուել էին միմեանց՝ տարբառաւ համար։

— Ինչքան սոխա՞ծ ենք, ասում էին նրանք։

— Չի՛ կարելի այստեղ պառկել, բռաց պահապանը, ու նրանք նորից գընացին թափառելու անձրևի տակ։

Այդպես նա թռաւ Պրինցի մօտ ու պատմեց, ինչ տեսել էր,

— Ես ծաշկուած եմ մաքուր ոսկով, ասաց Պրինցը.— Հանիր ոսկին շերտ առ շերտ, ու տուր իմ աղքատներին. կենդանի մեռածները միշտ կարծում են, որ ոսկին նրանց կերջանկացնի։

Ծիծեռնակը կատաղով պոկեց մաքուր ոսկին շերտ առ շերտ, մինչև որ Պրինցը դարձ ու ճռայլ դարձաւ։ Մաքուր ոսկին, շերտ առ շերտ, բաժանեց աղքատներին, և երեխաների դէմքերը աւելի վարդագունեցին, ու նրանք սկսեցին ծիծաղել ու փողոցում խաղալ։

— Այ՛ժմ որ հաց ունինք, բացակայեցին նրանք։

Այնուհետև ձիւն եկաւ և ձիւնից յետոյ սառնամանիք արաւ։ Փողոցները կարծես արծաթաշէն լինէին՝ այնքա՜ն պրպտուն էին ու շողշողուն։ Սառցէ երկայն պատուկները, բիւրեղէ գաշտոցների նման, կախուել էին տանիքների առաստաղներից, մարդիկ գուրս էին գալիս տներից մաւշտակների մէջ, և փոքրիկ տղաները կարմիր գլխարկներով տահուն էին տառուցի վրայ։

Խեղճ Ծիծեռնակը աւելի ու աւելի էր մրսում, իսկ Պրինցից չէր ուզում հեռանալ՝ այնքա՜ն սիրում էր նրան։ Նա հացթուխի դրան առաջին փշրանքներ էր

հաւաքում, երբ հայթիւ չէր նկատում, և թևերը թափահարելով աշխատում էր տարածել։

Սակայն վերջապէս նա ղղաց, որ մահը մօտենում է։ Եղած ոյժը հեքիք արաւ միայն Պրինցի ուսը բարձրանալու։

— Մնաս բարո՞վ, սիրելի՛ Պրինց, շշնջաց նա.—թոյլ կտա՞ս ձեռքդ համբուրել։

— Ես դոհ եմ, որ դու վերջապէս մեկնում ես Եգիպտոս, փոքրի՛կ Ծիծեռնակ, ասաց Պրինցը.—դու շա՜տ երկար մնացիր այստեղ, բայց դու պիտի համբուրես իմ շրթունքները, որովհետև ես քեզ սիրում եմ։

— Ես Եգիպտոս չեմ գնում, ասաց Ծիծեռնակը.—Ես գնում եմ դէպի Մահուան Օթևանը։ Մահը և քունը եղբայրներ են, այնպէս չէ՞։

Եւ նա համբուրեց Երջանիկ Պրինցի շրթունքներն ու մահացած ընկաւ նրա ոտների տակ։

Այդ րոպէին մի տարօրինակ պայթուն

լուսոյ արձանի ներսէն, կարծես թէ մի բան չարդուեց։ Արեւեմէ սիրուն էր դա, որ երկու մասի էր կիսուել։ Իսկապէս սարսափելի առնամանիք էր։

Հետեւեալ օրը, կանուխ, Քաղաքապետը-խը Քաղաքային Խորհրդաւորների հետ զբօսնում էր ներքեւ՝ սկուերում։ Կոմիտոյի մօտով անցնելիս Քաղաքապետը-խը բարձրացրեց գլուխն ու նայեց արձանին։

— Տէ՛ր Աստուած, ի՞նչ ողորմելի տեսք ունի Երշանիկ Պրինցը, սաստ նա։

Իրա՛ւ, ինչ ողորմելի է, բացականչեցին Քաղաքային Խորհրդաւորները, որոնք միշտ համակարծիք էին Քաղաքապետի հետ, ու նրանք բարձրացան արձանին նայելու։

— Թռիցը սուսակը ընկել է, աչքերն անհետացել են ու նա ալեւոր ասկէզօծ չէ, սաստ Քաղաքապետը,—իսկապէս նա մի քիչ աւել է, քան աղքատը։

— Մի քիչ աւել է, քան աղքատը, սաստցին Քաղաքային Խորհրդաւորները։

— Ու նրա ոտների տակ մի բոլորտիքն սատկած թռչուն կայ, շարունակեց

Քաղաքագլուխը հարկաւոր է մի յայտարարութիւն բաց թողնել, որ թռչունները արգելուում է այսուհետ սատկել։

Եւ Քաղաքային Խորհուրդը գրի առաւ այդ առաջարկը։

Ու տապալեցին Երջանիկ Պրինցի արձանը։

— Քանի որ նա այլևս գեղեցիկ չէ, հեռևապէս օգտակար էլ չէ, ասաց Գեղագիտութեան Պրոֆէսորը համարանում։

Ապա հալեցին արձանը հնոցի մէջ, և Քաղաքագլուխը Խորհրդարանում ժողով գումարեց՝ վճռելու, թէ ինչ անեն մեռածը։

Իհարկէ, մի այլ արձան պիտի շինենք, ասաց նա։—Եւ դա թող լինի հէնց իմը։

— Ի՛մը, ասաց Քաղաքային Խորհրդատուներից ամեն մէկը, ու կռուեցին։

Վերջերս լսեցի, որ մինչև սրա էլ դեռ կռուում են։

— Տարօրինակ բան, ասաց բանուորների Հսկիչը Ճուլարանում։—Այս կոտ-

բաժ արեւեմէ սիրաք հեռոյն մէջ չի հալուում։ Պէտք է նրան դէն ձգել։

Ու նրանք դէն ձգեցին աղբաքարը, ուր ընկած էր նաև սատկած Ծիծեռնակը։

— Քե՛ր ինձ մայրաքաղաքի ամենաթանգագին իրերից երկուսը, ասաց Աստուած Իր հրեշտակներից մէկին։ Ու հրեշտակը բերաւ արեւեմէ սիրտն ու սատկած թռչունը։

— Քո ընտրութիւնն արդարացի է, ասաց Աստուած,— որովհետև Իմ Արքայութեան պարտիզում այս փոքրիկ թռչունը պիտի երգէ յաւիտեան յաւիտենից ու Իմ ոսկէ քաղաքում Երջանիկ Պրինցը պիտի փառաբանի ինձ։

ՍՈԹԱԿՆ ՈՒ ՎԱՐԴԸ

ՍՈՒՍԱԿՆ ՈՒ ՎԱՐԴԸ

— Նա ինձ ասաց, որ կպարի հետս, եթէ նրա համար կարմիր վարդ բերեմ, բայցականչեց երիտասարդ Ռուանողը։— Այն ինչ իմ պարտիզում մի հատիկ կարմիր վարդ չկայ։

Լսեց նրան իր, քարտեղնու վրայ շինած, ընից Սոխակը, և նայեց սաղարթի մէջից, ու զարմացաւ։

— Մի հատիկ կարմիր վարդ իմ ողջ պարտիզում, բայցականչեց նա, և լցուեցին նրա չքնաղ աչքերն արտասուքներով։ —Ո՞հ, ի՞նչ չնչին բանից է կախուած մարդու երջանկութիւնը։ Ես կարդացել եմ այն ամենը, ինչ գրել են իմաստուն մարդիկ, և իմն են փիլիսոփայութիւնն բոլոր գաղտնիքները, այլմ, մի հատիկ

կարմիր վարդ չունենալու պատճառով՝ խորտակուած է իմ կեանքը։

— Ահա՛, վերջապէս, մի ճշմարիտ սիրուհի, ասաց Սոխակը.—Ամեն գիշեր երգել եմ ես նրա մասին, թէև ես նրան չէի ճանաչում։ Ամեն գիշեր ասել եմ ես նրա պատմութիւնը աստղերին, և հիմա տեսայ ես նրան։ Մուգ են նրա մազերը, ինչպէս յակինթը, և կարմիր են նրա շրթունքները, ինչպէս նրա որոնած վարդը, սակայն դունատուել է խանդից նրա դէմքը, ինչպէս փղոսկրը և իր կնիքն է դրել վիշտը՝ նրա ճակատի վրայ։

— Պրինցը վաղը երեկոյեան պարահանդէս է տալիս, շշնջաց երիտասարդ Ուռանոդը.—Եւ կլինի իմ սիրուհին հիւրերի շարքում։ Եթէ նրա համար կարմիր վարդ տանեմ՝ կպարի նա ինձ հետ մինչև լոյս։ Եթէ նրա համար կարմիր վարդ տանեմ՝ ձրան իմ թևը կառնեմ, և կթեքի նա իր դլուխը իմ ուսին, և կանցնեմ ես նրա ձեռքը իմի մէջ։ Բայց չկայ իմ պարտէզում մի հատիկ վարդ, ուստի ես պէ-

ոչ նստեմ մենակ, և կանչեցնի նա իմ մօտից, նայնիսկ ինձ չի՛ նայի, և իմ սէրը կփշրուի։

— Ահա՛, իսկապէս, ճշմարիտ սիրահարը, ասաց Սոխակը.—Այն՝ ինչ երգում եմ, նա զգում է, այն, ինչ բերկրանք է ինձ համար, նրա համար տառապանք է։ Անշուշտ, սէրը հրաշալի է։ Նա աւելի թանկ է, քան զմրուխտը, և շա՛տ թանկ, քան մարգարիտը։ Մարգարիտներով և նռնեբով նրան չեմ առնի, և ոչ էլ կարելի է նրան ցուցադրել շուկայի մէջ։ Գնել նրան չեն կարող վաճառականները, և ոչ էլ կշռել ոսկու նժարով։

— Կնստեն երաժիշտները դալլերէյում, ասաց եբիտաոարդ Ուսանողը.—Եւ կնուագեն լարաւոր գործիքների վրայ, և կպարի իմ սիրուհին քնարի ու ջութակի ներդաշնակութեամբ։ Կպարի նա այնպէ՞ս թեթեւաքայլ, որ չեն դիպչի նրա ոտները յատակին, և կխանձուեն նրա շուրջը պալատականները՝ իրենց շքեղ հագուստներով։ Իսկ ինձ հետ չի՛ պարի նա, որով-

հետև վարդ չեմ ունենայ նրան տալու,— ու ընկաւ նա խոտի վրայ, և ժամեկց ձեռներով իր դէմքը ու լաց եղաւ։

— Ինչո՞ւ է լալիս, հարցրեց փոքրիկ Կանաչ Մողէզը, երբ պռէը ցիր, վազում էր նրա մօտով։

— Ճշմարի՛տ, ինչո՞ւ, ասաց Թիթեռնիկը, որ թռչկռտում էր արևի շողի շուրջը։

— Ճշմարի՛տ, ինչո՞ւ, հարցրեց Մարգարտաճաղիկը իր հարևանին մեղմ ու քնքոյշ շշուկով։

— Մի կարմիր վարդի համար է նա լալիս, ասաց Սոխակը։

— Մի կարմիր վարդի համա՞ր, բացականչեցին նրանք.—Շատ ծիծաղելի է, և փոքրիկ Մողէզը, որ մի քիչ ցինիկ էր, հրճվեց ծիծաղեց։

Միայն Սոխակը հասկացաւ Ուսանողի վշտի գաղտնիքը, և նատեց լռելյայն կաղնու ծառի վրայ, ու մտածեց Սիրոյ խորհրդի մասին։

Մէկ էլ յանկարծ տարածեց իր պարշ

Թևերն ու նեռուեց օդի մէջ։ Նա սլացաւ պոռրակի վրայով՝ ինչպէս մի ատուեր, և ատուերի պէս նա անցաւ պաքտիդի վրայով։

Կանաչ արօտում մի չքնաղ վարդի ծառ կար, և երբ տեսաւ նա այդ ծառը՝ թռաւ դէպի նա, ու նստեց նրա ճիւղերից մէկի վրայ։

— Ինձ մի կարմիր վա՛րդ տուր, բացականչեց,—և կերգեմ քեզ իմ ամենից քաղցրալուր երգը։

Ու շարժեց Վարդենին իր գլուխը։

— Սպիտա՛կ են իմ վարդերը, պատասխանեց,—Սպիտակ՝ ինչպէս ծովի փրփուրը, և աւելի սպիտակ՝ քան լերան պաղաթի ձիւնը։ Սակայն՝ դնա՛ դու իմ եղբօր մօտ, որ բուսել է Արևի հնամեայ ժամացոյցի մօտ, և, թերևս, տայ քեզ նա՝ քո ուզածը։

Ու թռաւ Սոխակը դէպ այն վարդենին, որ բուսել էր Արևի հնամեայ ժամացոյցի մօտ։

— Ինձ մի կարմիր վարդ տուր, բա-

ցականչեց.—Եւ կերդեմ քեզ իմ ամենից քաղցրալուր երդը։

Ու շարժեց վարդենին իր գլուխը։

— Դեղին են իմ վարդերը, պատասխանեց.—Դեղի՛ն՝ ինչպէս մաղերը չրանուշի, որ բաղմած է սաթէ գահի վրայ, և աւելի գեղին՝ քան նարկիսը, որ ծաղկում է մարդում, մինչև որ կգայ խոտաքը իր սուր գերանդիով։ Սակայն՝ գնա՛ դու իմ եղբօր մօտ, որ բսել է Ուսանողի պատուհանի տակ, և, թերևս, տայ քեզ նա՝ քս ուզածը։

Ու թռաւ Սոխակը դէպ այն վարդենին, որ բսել էր Ուսանողի պատուհանի տակ։

— Ինձ մի կարմիր վա՛րդ տուր, բացականչեց.—Եւ կերդեմ քեզ իմ ամենից քաղցրալուր երդը։

Ու շարժեց վարդենին իր գլուխը։

—Կարմի՛ր են իմ վարդերը, պատասխանեց.—Կարմիր՝ ինչպէս ոգաւնու տուտիկները, և աւելի կարմիր քան մարջանի մեծ հովհարները, որոնք ծածանւում

են յար ոլիկեանի անձաւներում։ Սակայն՝ սառցրել է ձմեռն իմ երակները, և տարրել է սառնամանիքն իմ բողբոջները, և փշրել է փոթորիկն իմ ճիւղերը, և այս տարի, մինչև վերջ, մի հատիկ վարդ չը պիտի ունենամ։

— Մի հատիկ վա՞րդ՝ ահա իմ ողջ ուզածը, բացականչեց Սոխակը.— Միայն մի կարմիր վա՞րդ։ Մի՞թէ ուրիշ հնար չկայ, որ ես գտնեմ։

— Եւ մի հնար, պատասխանեց Վարդենին,—բայց դա այնքան դաժան է, որ չեմ համարձակւում քեզ ասել։

— Ասա՛ ինձ, բացականչեց Սոխակը,— ես չեմ վախենում։

— Եթէ դու վա՛րդ ես ուզում, ասաց Վարդենին.—դու պիտի ստեղծես քո դայլայլներից՝ լուսնի շողերի տակ, և ներկես՝ քո սեփական սրտի արիւնով։ Դու պիտի երգես ինձ համար՝ կուրծքդ փշոտ սեղմած։ Ողջ գիշերը պիտի երգես ինձ համար, փուշս պիտի խոցի սիրտդ, և

կենդանի արիւնդ ալիտի հոսի երակներիս մէջ և դառնայ իմ արիւնը.

— Մահը մեծ արժէք է՝ մի կարմիր վարդ գնելու համար, բացականչեց Սոխակը.— Եւ քանի է կեանքը՝ բոլորի համար։ Դուրեկա՞ն է՝ նստել կանաչ անտառում և դիտել Արևը՝ իր ոսկէ կառքի մէջ, ու Լուսինը՝ իր մարգարտէ կառքում։ Անո՞ւշ է հրշակի բուրմունքը և անո՞ւշ՝ զանգակ-ծաղիկները, որոնք քաղ են կենում հովիտներում, և հաւամրգերը, որոնք ծաղկում են բլուրներում։ Բայց և այնպէս Սէրը աւելի լաւ է՝ քան կեանքը, և քանի դրոշ արժէ մի թռչնի սիրտ, համեմատած մարդու սրտի հետ։

Ու տարածեց իր դորշ թևերն, ու նստեց օդի մէջ։ Նա սլացաւ պարտէզի վրայով՝ ինչպէս մի ստուեր, և, ինչպէս մի ստուեր, նա անցաւ պուրակի վրայով։

Երիտասարդ Ուսանողը դեռ ևս պառկած էր խոտի վրայ, ուր թողել էր նրան Սոխակը, և դեռ ևս, չէին ցամաքել արտասուքները նրա չքնաղ աչքերից։

— Ուրախացի՛ր, բացականչեց Սոխակը. — Ուրախացի՛ր, կատարս կարմիր վարդ։ Կառեղծեմ ես նրան իմ գայլայլներից՝ լուսնի շողի տակ, և կներկեմ՝ իմ սեփական սրտի արիւնով։ Մի բան, որի փոխարէն խնդրում եմ ես քեզանից, դա այն է՝ որ դու միայն անձնուէր սիրահար, որովհետև Սէրն աւելի իմաստուն է՝ քան Փիլիսոփայութիւնը, թէև Փիլիսոփայութիւնն էլ է իմաստուն, և աւելի հզօր՝ քան Իշխանութիւնը, թէև Իշխանութիւնն էլ է հզօր։ Հրակէզ են նրա թևերը և հրափառ՝ նրա մարմինը։ Նրա շրթունքները քաղցր են՝ մեղրի նման, և խնկահոտ է նրա շնչառութիւնը։

Ուսանողը նայեց նրան խոտի վրայից, և լսեց, բայց չհասկացաւ, թէ ինչ է ասում Սոխակը, որովհետև նա գիտէր միայն այն՝ ինչ գրքերում էր գրուած։

Սակայն կաղնին հասկացաւ, և տրտմեց, որովհետև նա ատամիկ սիրում էր փոքրիկ Սոխակին, որ իր բունը նրա ճիւղերի վրայ էր հիւսել։

— Երդիր ինձ քո վերջին երդը, շշնջաց նա.— Ես կարօտեալ եմ քեզ՝ երդում այլ ես չլինեմ։

Ու երդեց Սոխակը Դաղնուն, և նման էր նրա ձայնը արծաթէ կժից հոսող ջրի կարկաչին։

Երբ նա աւարտեց իր երգը՝ Ուսանողը բարձրացաւ տեղից, և հանեց նկատողութեան տետրը ու մի մատիտ՝ գրպանից։

— Նա ձեր գիտէ, ասաց ինքն իրեն պարզապէս անցնելիս.—Այդ չի՛ կարելի բացատրել. բայց, արդեօք, ունի՞ զգացմունք։ Վախենում եմ որ օ՛չ։ Փաստօրէն նա նման է արուեստագէտներից շատերին. ամբողջովին արուեստ է՝ զուրկ որևէ զգացմունքից։ Նա ամենևին իրեն չի՛ գոհի ուրիշի համար։ Նա մտածում է լոկ երաժշտութեան մասին, այն ինչ ամեն մարդ գիտէ, որ արուեստը եսասէր է։ Ցամենայն դէպս պիտի խոստովանեմ, որ ձայնի մէջը կան գեղեցիկ նոտաներ։ Փաստս, որ այդ նոտաները ոչ մի իմաստ չունին, և ոչ էլ մի որևէ գործնական օգուտ են բերում

Ու գնաց իր սենեակը, ու պառկեց իր փոքրիկ մահճակալի վրայ, և սկսեց խորհել իր սիրոյ մասին. ու մի փոքր անց, քնով անցաւ։

Ու երբ Էուսինը շողաց երկնքում՝ Սոխակը թռաւ Վարդենու մօտ ու սեղմեց կուրծքը նրա փշին։ Ողջ գիշերը երգեց նա կուրծքը փշին սեղմած. ու թնքուել էր յուրա բիւրեղանման Էուսինն ու ամանջ էր դնում Ողջ գիշերը երգեց նա, և փուշն աւելի ու աւելի էր խոցւում նրա կրծքի խորքը, և կենդանի արիւնը հոսում էր այնտեղից։

Առաջ նա երգեց սիրոյ ծագման մասին՝ ոգալի ու աղջկայ սրտերում։ Եւ Վարդենու ամենաբարձր ճիւղի վրայ ծագեց մի չքնաղ վարդ՝ թերթիկ առ թերթիկ, երգ առ երգ։ Սկզբում դունատ էր, ինչպէս մի մէգ, որ կախուած է դեռի վրայ, դունատ՝ ինչպէս ցայգալուսի ուլին, և արծաթափայլ՝ ինչպէս արշալուսի թեւերը։ Արծաթէ հալելու մէջ վարդի ցոլոցումի էր նման, ջրակի մէջ վարդի ցո-

ացումի էր նման այն վարդը, որ ծաղկեց Վարդենու ամենաբարձր ճիւղի վրայ։

Իսկ Վարդենին կոչ էր անում Սոխակին, որ նա աւելի հուպ գայ իր փշին։

— Էլի՛ հուպ եկ, փոքրիկ Սոխակ, բացականչեց Վարդենին.—թէ ոչ Օրը կըբացուի աւելի վաղ, քան վարդը պատրաստ կլինի։

Ու Սոխակն աւելի էր հպւում փշին, և հնչում էր նրա երգն աւելի ու աւելի բարձր, որովհետև նա երգում էր կրքի ծաղման ճաճին՝ տղամարդու ու կոյսի հոգու մէջ։

Եւ մի քնքոյշ, վարդագոյն նեռկ հասել վարդի թերթիկների մէջ, նման նորապեսի շառագունած այտերին, երբ նա նորահարսի շրթունքներն է համբուրում. բայց փուշը դեռ ևս նրա սրտին չէր հասել, ուստի սդիտակ էր դեռ վարդի սիրտը, որովհետև միայն Սոխակի սրտի արիւնն էր կարող նեռկիկ վարդի սիրտը։

Եւ Վարդենին կոչ արաւ Սոխակին, որ նա աւելի հուպ գայ իր փշին։

— Էլի՛ հուպ եկ, փոքրի՛կ Սոխակ, կանչում էր Վարդենին.— թէ ոչ Օրը կը բացուի աւելի վաղ, քան վարդը պատրաստ կլինի։

Ու Սոխակն աւելի էր հպւում փշին, և հատաւ փուշը նրա սրտին, և ցաւի մի սուր խայթոց հարուածեց նրան։ Քանի դնում աւելի զոռ էր հնչում երգը, որովհետև նա երգում էր սիրոյ մասին, որ ղրոշմւում է Մահով, Սիրոյ մասին, որ չի մեռնում դերեզմանում։

Եւ չքնաղ վարդն ալ կարմիր դարձաւ, արշալուսի վարդի նման։ Ալ կարմիր էր թերթիկների պսակը, ալ կարմիր էր, ինչպէս սուտակ, նրա սիրտը։

Իսկ Սոխակի ձայնը քանի դնում նուաղում էր. և թրպռացին նրա փոքրիկ թևիկները, և մթագնեցին նրա աչքերը։ Քանի գնաց՝ նուաղեց նրա երգը, և նա զգաց, որ մի բան սեղմում է բուկը։

Այդ արձակեց մի վերջին դայլայլ։ Կաթնաման Լուսին բլից ու մատաղ բուսաբացը՝ կանգ առաւ երկնակամարի

վրայ։ Լսեց կաքմիր վարդը, և սառաբաց սիրտդ մարմնով հիացքից, և արձակեց իր թևբթիկներն առաւօտեան զով հովին։ Իսկ արձագանքը տարաւ նրան իր լեռնային բոսոր քարանձաւը, և արթնացրեց քնած հովիւներին։ Նա սահեց դեռի եղջիւրների վրայով, և եղջիւրներն առան ուսուին ծովին։

— Տե՛ս, տե՛ս, բացականչեց Վարդենին.—Վարդն արդէն պատրաստ է։ Բայց չպատասխանեց Սոխակը, որովհետև նա անշունչ ընկած էր խոտի վրայ՝ փուշը կրծքին։

Ու կէս օրին, բաց արաւ Ուսանողն իր պատուհանն ու դուրս նայեց։

— Պա՜հ, զարմանալի բան, բացականչեց.—ահա՛ մի կաքմիր վարդ։ Նմանը չեմ տեսել իմ ողջ կեանքում։ Այնքան գեղեցիկ է, որ ես հաւատում եմ՝ մի երկար Լատինական անուն ունի.—և կանչաւ ու կարեց վարդը։

Ցեռոյ դրեց գլխարկը, և վազեց պրոֆէսորի տունը՝ վարդը ձեռքին։

Պրոֆէսորի աղջիկը նստել էր դրան առաջին և կապոյտ մեւաքս էր մանում հախարտակի վրայ, և պատկել էր նրա փոքրիկ շունը նրա ոտների տակը։

— Դուք ասացիք, որ կպարէք ինձ հետ, եթէ կարմիր վարդ բերեմ ձեզ համար, բացականչեց Ուսանողը.— Ահա ամենակարմիր վարդն աշխարհիս երեսին, կպցրէք այս երեկոյ ձեր սրտին մօտիկ, և երբ միասին պարելու լինենք, կպատմի ձեզ, թէ ինչպէ՞ս եմ սիրում ձեզ։

Իսկ աղջիկը խոժոռեց դէմքը։

— Վախենում եմ, որ չսազի իմ հագուստին, պատասխանեց.— Եւ բացի այդ, սենեկապետի քրոջ որդին ուղարկել է ինձ իսկական թանկագին քարեր, իսկ ամենքին յայտնի է, որ թանկագին քարերն աւելի արժեն, քան ծաղիկները։

— Ադնիւ խօսք, շատ ապերախտն էք, ասաց Ուսանողը զայրացած. և վարդը շպրտեց փողոցը, ուր ընկաւ մի փոսի մէջ, և կառքի անիւն անցաւ վրայով։

— Ապերա՞խտ, ասաց աղջիկը.— գի-

ոչ՞ք, չափից դուրս կոպիտն էք. և, վերջապէս, ինչացո՞ւ էք. լոկ մի ուսանող. Զեմ էլ կարծում, որ, անդամ, արժանի չափրատ ունենաք ձեր կոշկի փրայ, ինչպէս սենեկապետի քրոջ որդին։

Եւ վեր կացաւ աթոռից ու գնաց առաջ։

— Ինչ խելառ բան է Սէրը, ասաց Ուսանողը՝ հեռանալով։—Անդամ կիսով չափ օգտակար չէ Տրամաբանութիւնից, որովհետև ոչինչ չի՛ ապացուցում, և մշտապէս ասում է այն, ինչ չի՛ իրաւորժեում, ստիպում է մարդուն հաւատալ այն բանին, որ գոյութիւն չունի Իսկապէս, նա բոլորովին անդործնական է. և, որովհետև այս դարին գործնական է ամեն ինչ՝ նա կգտնեմ դէպի Փիլիսոփայութիւնն ու կսկսեմ ուսումնասիրել Մետաֆիզիկան։

Այսպէս վերադարձաւ իր սենեակը, և հանեց մի մեծ փոշոտած գիրք, և սկսեց կարդալ։

ԵՍԱՍԷՐ ՀՍԿԱՆ

ԵՐԱՍԷՐ ՀՍԿԱՆ

Ամեն իրիկնապահ երեխաները, դրսից վերադառնալիս, մտնում էին հրակայի տակին ու խաղում։

Դա մի մեծ, գեղեցիկ այգի էր՝ նուրբ կանաչ խոտով։ Այս ու այն կողմ խոտերի միջից բարձրանում էին, առաղերի պէս չքնաղ, ծաղիկները, և կար այնտեղ տասներկու ծիրանի ծառ, որոնք գարնանը բացում էին քնքոյշ ծաղիկներով, և աշնանը տալիս՝ առատ մրգեր։ Թռչունները թառում էին ծառերին ու երգում այնքա՜ն քաղցրանուշ, որ մանուկները թողնում էին իրենց խաղը ու ակռանջ դնում նրանց։

— Ի՞նչ երջանիկ ենք մենք այստեղ, ասում էին նրանք միմիանց։

Մի օր Հական վերադարձաւ։ Նա այլի էր գնացել իր բարեկամ Կորնուէլի մարդակերին և եօթ տարի մնացել Դրա մօտ։ Այդ եօթ տարում նա ասել էր այն ամենը, ինչի մասին պիտի խօսէր, որովհետև Նրա ասելիքը սահմանափակ էր, և նա վճռեց վերադառնալ իր սեփական դղեակը։ Երբ նա դարձաւ, տեսաւ երեխաներին, որոնք խաղում էին այգու մէջ։

— Ի՞նչ է անում այստեղ, գոչեց նա դաժան ձայնով, և մանուկները փախան։

— Իմ սեփական այգին՝ իմ սեփականութիւնն է, ասաց Հական,— ամեն մարդ թող այդ լա՛ւ իմանայ, և ոչ ոքի թող չեմ տայ այստեղ խաղալ՝ բացի ինձնից։ Ապա նա այդու չորս կողմը բարձր պատնէշ քաշեց ու վրան մի գրատնակ կախեց.

ԻՐԱՒԱՔԱՆՑԻՐ
ԿԸ
ԴԱՏԱՊԱՐՏՈՒԻ

Մի իսկական եռաւէր էր նա։
Այժմ խեղճ երեխաները տեղ չունէին

խաղալու։ Փորձեցին խաղալ ճանապարհին, բայց այնտեղ փոշոտ էր և լեքը կարծր քարերով, և այդ Ներանց սրտովը չէր։ Նրանք, դասերից յետոյ, թափառում էին բարձր պատնէշի շուրջը և խօսում գեղեցիկ այգու նեբսի մասին։

— Ի՞նչ երջանիկ էինք մենք այնտեղ, ասում էին միմիանց։

Ապա եկաւ Գարունը, և ողջ աշխարհը լցուեց փոքրիկ ծաղիկներով ու փոքրիկ թռչնիկներով։ Միայն Եսատէր հոկայի այգում տիրում էր խոր Ձմեռը։ Թռչունները չէին ուզում երգել, որովհետև այնտեղ մանուկներ չկային, և ծառերը մոռացան ծաղկել։ Մի անգամ մի գեղեցիկ ծաղիկ գուրս հանեց իր գլուխը խոտի տակից, բայց երբ տեսաւ ցուցանակը՝ այնքան խղճաց մանուկներին, որ խակոյն ներս քաշեց գլուխն ու քնեց անդամ։

Գոհ էին միայն Ձիւնն ու Սառնամանիքը.

— Գարունը մոռացել է այս այգին,

ասում էին նրանք.— ու մենք այստեղ կապրենք տարին տասնեքկու ամիս։

Զիւնը ծածկել էր խոտը իր մեծ ապիտակ քղամիտով, և սառնամանիքը պատել էր բոլոր ծառերը արծաթով։ Ցեռոյ նրանք հիւր կանչեցին իրենց մօտ Հիւսիսային Քամուն, ու նա եկաւ։ Նա փաթաթուած էր մուշտակի մէջ և ողջ օրը ոռնում էր այդում ու տեղատեղն անում ծխնելոյզների ծածկոցը։

— Հիանալի տեղ է այս, ասաց նա։ — մենք հիւր կկանչենք մեզ մօտ և Կարկտին։

Ու եկաւ Կարկուտը։ Ամեն օր, օրը երեք ժամ, նա թմբկահարեց դղեակի տանիքը, մինչև որ ջարդ ու փշուր արաւ կղմինտրները, և ապա պատում էր այդուհետև կողմը այնքան արագ, ինչքան կարող էր։ Նրա զգեստը դարչ էր և շունչը՝ սառոյց։

— Ես չեմ կարողանում հասկանալ՝ ինչո՞ւ այսքան ուշացաւ Գարունը, ասաց Եսաէը Հոկտեմբերի պատու-

հանել առաջ և հայելով իր ցուրտ և սպի-տակ այգուն,—չոյս ունիմ, որ կփոխվի եղանակը։

Սակայն ո՛չ Գարունն եկաւ և ոչ էլ Ամառը։ Աշունը ամեն մի այգու ոսկէ մրգեր բերաւ, իսկ Հսկայի այգուն՝ աչքինչ։

— Նա անչափ եսասէր է, ասաց նա։

Ու այդտեղ մշտապէս Ձմեռ էր, և Հիւսիսային Քամին, և Կարկուտը, և Սառնամանիքը, և Ձիւնը պարում էին ծառերի միջին։

Մի առաւօտ Հսկան պառկած էր մահ-ճակալի վրայ, երբ լսեց մի գեղեցիկ երաժշտութիւն։ Նա հնչեց նրա ականջին այնքա՛ն քաղցրանուշ, որ նա կարծեց, թէ Արքայական նուագածուներն են անցնում։ Դա, նրա պատուհանի տակ երգող մի փոքրիկ կանաչակեր էր լոկ. բայց նա այնքա՛ն վաղուց իր այգում թռչնի երգ չէր լսել, որ այդ երգը նրան թուաց աշխարհիս ամենաքանչելի երաժշտութիւնը։ Մինչ այդ Կարկուտը պարեցց պարելուց նրա գլխին և Հիւ-

սխալին Քամին կտրեց իր ոռնոցը, և մի անուշ բուրմունք ներս խուժեց կիսաբաց վեղկից։

— Կաթես, վերջապէս, Գարունն է եկել, ասաց Հսկան. և նա ցատկեց մահճակալից ու դուրս նայեց։

Ի՞նչ տեսաւ։

Մի զարմանալի պատկեր տեսաւ նա։ Պատնէշի մի փոքրիկ ճեղքից մանուկները ներս էին խուժել ու նստոտել ծառերի ճիւղերի վրայ։ Ամեն մի ծառի վրայ մի փոքրիկ մանուկ տեսաւ։

Եւ ծառերն այնքան գոհ էին մանուկների դալստեան, որ խսկոյն ծաղկուել էին ծաղիկներով, նրանց թեւերը մեղմ օրօրւում էին մանուկների գլխին։ Թռչունները ճախրում էին օդի մէջ և ուրախ ճռւողում, և ծաղիկները մեղմ նայում էին կանաչ խոտերի տակից ու ժիծաղում։ Դա մի սքանչելի տեսարան էր։ Միայն մի անկիւնում մթափում էր Ձմեռը։ Դա այդպես ամենատեսակ անկիւնն էր, և այնտեղ կանգնած էր մի

փոքրիկ աղայ։ Նա այնքան փոքր էր, որ չէր հասնում ծառի ճիւղին, և պատելով նրա շուրջը՝ աղիողորմ լալիս էր։ Խեղճ ծառը ղեռ ևս պատած էր եղեամով ու ձիւնով, և հիւսիսային քամին վիշտ ու տանում էր նրա դլխին։

— Վա՜ յ բարձրացիր, մանկի՛կ, ասաց ծառը և իջեցրեց իր ճիւղը, որքան կարող էր. բայց աղան շատ պստիկ էր։

Եւ հսկայի սիրտը կակղեց, երբ տեսաւ այդ։

— Ինչքա՜ն եսասէր եմ եղել, ասաց նա.—Հիմա գիտեմ, ինչու Գարունը չէր ուզում գալ այստեղ։ Կնատեցնեմ ես այս խեղճ աղային ծառի վրայ, և յետոյ կը քանդեմ պատնէշը, և իմ այգին պիտի լինի երեխաների խաղատեղի՝ միշտ և յաւիտեան։

Եւ իրաւ ափսոսաց իր արածի վրայ։

Նա լաւ ցած իջաւ, մեղմ բացեց մուտքի դուռը և դուրս եկաւ այգին։ Երեխաները երբոն տեսնելուն պէս այնպէս վախեցան, որ իսկոյն դուրս փախան, և

կրկին լեռ եկաւ Զմեռը։ Զփոխաւ միայն փոքրիկ տղան, որովհետև նրա աչքերը այնպէս էին լցուել արտասուքներով, որ չէր նկատել Հսկայի դալը։

Եւ Հսկան դդոյշ մօտեցաւ, քնքշօրէն նրան իր բազկի վրայ առաւ ու դրեց ծառին։ Եւ ծառը յանկոյն ծաղկեց, և թռչունները եկան ու երգեցին նրա վրայ, և փոքրիկ մանուկը պարզեց իր երկու ձեռը և դրկեց Հսկայի վիզն ու համբուրեց նրան։ Եւ միւս մանուկները,— երբ տեսան, որ Հսկան այլևս չարաչիրտ չէ,—լեռ եկան, և նրանց հետ վերադարձաւ Գարունը։

— Հիմա աւ ձեր այգին է, փոքրիկ մանուկնե՛ր, ասաց Հսկան, և վերցրեց մի մեծ կացին ու քանդեց պատնէշը։ Եւ երբ մարդիկ կէսօրին շուկայ էին գնում՝ տեսան Հսկային երեխաների հետ խաղալիս մի այնպիսի այգու մէջ, որի նմանը երբէք տեսած չէին։

Ողջ օրը նրանք խաղում էին, և երեկո-

ներըը գալիս Հակայի մոտ՝ «բարի գիշեր» ասում։

— Ո՞ւր է, ապա, ձեր փոքրիկ ընկերակիցը, ասաց նա,—ծառի վրայ իմ գրած տղան։

Հական նրան ամենից շատ սիրեց, որովհետև նա նրան համբուրել էր։

— Զգիտե՛նք, պատասխանեցին մանուկները,—նա գնացել է։

— Ասացէք նրան, որ վաղն անպատճառ այստեղ գայ, ասաց Հական։

Բայց երեխաները ասացին, որ չգիտեն որտե՛ղ է ապրում և որ առաջ նրան երբէք չեն տեսել, և Հական շատ տրտմեց։

Ամեն իրիկնապահ, դասերից յետոյ, երեխաները գալիս ու խաղում էին Հրակալի հետ։ Իսկ փոքրիկ տղան, որին Հրական սիրում էր, ոչ մի անգամ չերևաց։ Հական շատ սիրալիր էր դէպի բոլոր երեխաները, սակայն նա կարոտում էր իր առաջին փոքրիկ բաքեկամին, և յաճախ հարց ու փորձ անում նրա մասին

— Ինչ է հանցագործ կուղէի տեսնել նրան, ասում էր նա։

Տարիներն անցնում էին, և Հակոբն ստատիկ ծերացաւ և ուժից ընկաւ։ Նա այլևս չէր կարողանում խաղալ, այլ նրա-տում էր իր վիթխարի բազկաթոռին և դիտում երեխաների զուարճութիւններին և հիանում իր այդու վրայ։

— Ես շատ գեղեցիկ ժաղիկներ ունիմ, ասում էր նա։—բայց ամենագեղեցիկ ժաղիկները՝ երեխաներն են։

Մի ձմեռնային առաւօտ, նա, հագնուելուց, իր պատուհանից նայեց դուրս։ Նա այլևս չէր տեսնում Ձմեռը, որովհետև գիտէր, որ Գարունը այդ պահին միայն նիրհում է, և որ ժաղիկները հանդիսատ են առնում։

Ցանկարծ, զարմանքով, նա տրորեց իր աչքերն ու սկսեց նայել ու նայել։ Անշուշտ մի հրաշալի տեսարան էր։ Այդտեղ ամենահեռաւոր անկիւնում կար մի ծառ ամբողջովին ծաղկուած գեղեցիկ, սպիտակ ժաղիկներով։ Նրա ճիւղերը ոսկուց

էին, և նրանցից կախուած պատուհանները արծաթէ, և տակը կանգնած էր, նրա սիրած, փոքրիկ տղան։

Հսկան տրտուր իջաւ տանդուղներով ու դուրս եկաւ այդ։ Նա խոտերով ուղղակի դէպի մանուկը վազեց։ Երբ բոլորովին մօտեցաւ նրան, նրա դէմքը բարկութիւնից շառադունեց, և նա ասաց.

— Այդ ո՞վ է յանդգնել վիրաւորելու քեզ։

Որովհետև մանկան ափերի մէջ երկու մեխի հետք կար, ու այդ երկու մեխի հետքը կար և նրա փոքրիկ ոտների վրայ։

— Այդ ո՞վ է յանդգնել վիրաւորելու քեզ, դոչեց Հսկան.— Ասա՛ ինձ, որպէսզի կարողանամ վերցնել իմ ծանր թուրը և սպանել նրան։

— Ո՛չ, պատասխանեց մանկիկը.— Չէ՞ որ սրանք Սիրոյ վէրքեր են։

— Ո՞վ ես դու, հարցրեց Հսկան, և մի խորհրդաւոր երկիւղ պատեց նրան, ու նա ծունկի իջաւ փոքրիկ մանկան առաջ։

Եւ մանուկը ժպտաց Հսկային և ասաց նրան.

— Մի օր դու թոյլ տուիր ինձ խաղալու քո այգում. այսօր դու կդաս ինձ հետ իմ այգին, որ Օրքայութիւնն է։

Եւ երբ երեխաները այդ իրիկնապահին տուն էին դառնում, ծառի տակը գտան անշնչացած Հսկային, որ ողջ ծածկուել էր սպիտակ ծաղիկներով։

ԱՆՁՆՈՒԼԻՐ ԲԱՐԵԿԱՄԸ

ԱՆՁՆՈՒԷՐ ԲԱՐԵԿԱՄԸ

Մի առաւօտ պառաւ Չրամուկը դըրտէսը հանեց ընկոյզ։ Նա ունէր պապըդուն ուլունքէ աչքեր և գորշ ու կոշտ բէխեր, իսկ պոչը՝ ինչպէս մի սև ռետինէ պարան։ Լճի մէջ լողում էին բադիկները՝—նման դեղին դեղձանիկների մի երամի,—ու մայրը,—ինքը՝ ոգջ սպիտակ, իսկ թոթիկները՝ ալ-կարմիր—ուզորեցնում էր նրանց՝ ինչպէս գլխիվայր կանգնեն ջրի մէջ։

— Մինչև որ գլխի վրայ չկարողանաք կանգնել, դուք երբէ՛ք լաւ հասարակութեան մէջ մուտք չէք ունենայ, կրկնում էր նա անդադար։ Եւ, ժամանակ առ ժամանակ, ցոյց էր տալիս, թէ ինչպէ՛ս սպիտակ ոտներ։ Իսկ բադիկները ուշք չէին դարձնում նրա վրայ։ Նրանք այնքան դեռատի էին, որ չգիտէին, թէ, առ հա-

սարսափ, հաստատակամութեան մէջ լինելը ի՞նչ առաւելութիւն ունի։

— Շա՛տ անհնազանդ են, դուշեց պատասխանեց Զրամուհը։—Ուղղակի արժէ դրանց խնդրեր։

— Ո՛չ երբէք, պատասխանեց Բաղրը։—Սկիզբն է միայն դժուար, և ծնողները չպիտի անհամբեր լինեն։

— Ա՜խ, խորթ են ինձ համար ծնողական զգացմունքները, ասաց Զրամուհը։—Ես բնաւանէաբ չեմ։ Իսկն ասած, ես չեմ ամուսնացել և մտադրութիւն էլ չունիմ ամուսնանալու։ Սէրն ինքն ըստ ինքեան լաւ բան է, սակայն բարեկամութիւնն աւելի բարձր է։ Իսկապէս, աշխարհիս երեսին անձնուէր բարեկամութիւնից աւելի ազնիւ և աւելի հաղորդակցուտ բան չկայ։

— Իսկ որո՞նք են, ասա՛ խնդրեմ, քո կարծիքով, անձնուէր բարեկամի պարտականութիւնները, հարցրեց մի Կանաչ Կանեփակեր, որ, նստած ճտակայ Ուռենու վրայ, լսել էր խօսակցութիւնը։

— Ես էլ կուզենայի իմանալ, ասաց Բաղը և լռեց դէպի լճի ծայրն ու գալխի վրայ կանգնեց՝ իր երեխաներին ձեր ցոյց տալու համար։

— Ա՛յ չիմար հարց, բացականչեց Զրամուկը.— Իհարկէ, ես կուզենայի, որ իմ անձնուէր բաբեկամը դէպի ինձ անձնուէր լինի։

— Իսկ ի՞նչ կանէիր դու դրա փոխարէնը, հարցրեց փոքրիկ թռչնիկը արծաթ ճիւղի վրայ օրօրուելով ու իր փոքրիկ թևերը թափահարելով։

— Ես քեզ չե՛մ հասկանում, պատասխանեց Զրամուկը։

— Թոյլ տուէք այդ առիթով մի պատմութիւն անել, ասաց Կանեփակերը։

— Ի՞մ վրայ է այդ պատմութիւնը, հարցրեց Զրամուկը։— Եթէ այո՛, ապա կը լսեմ, որովհետև ես սաստիկ սիրում եմ առասպելները։

— Կարող է և քե՛զ վերաբերել, ասաց Կանեփակերը։ Եւ նա ցատկեց ու նստեց

ակին ու արաւ «Անձնուէր Բարեկամի» պատմուածքը։

«— Հին ժամանակ, ասաց Կանեփակերը,—կար չկար մի ազնիւ երիտասարդ ողջ կար, անունը՝ Հանու։

— Յայտնի մարդ էր, հարցրեց Զրամուկը։

— Ո՛չ, պատասխանեց Կանեփակերը,—չեմ կարծում որ նա առհասարակ յայտնի լինէր, եթէ չհաշուենք նրա բարի սիրտն ու ծիծաղաշարժ, պարզամիտ կլոր դէմքը։ Ապրում էր նա մի փոքրիկ խրճիթում, մեն-մինակ, ու օրն ի բուն աշխատում էր պարտիզում։ Ողջ շրջակայքում նրա պարտիզի պէս սիրուն Պարտէզ չկար։ Անուշ Մեխակն էր բանում այնտեղ, և՛ Շահպրակը, և՛ Հովուի Պարկը, և՛ Ֆրանսիական Զքնաղ Կոյսը։ Այնտեղ էր՝ ալ Վարդն ու դեղին Վարդը, մանուշակագոյն Հաֆրանն ու դրա ոսկեգոյնը, ծիրանի Մանուշակն ու դրա սպիտակը։ Զանդակ ծաղիկն ու Դաշտի Կոռեմը, Սուսամբարն ու վայրի Ռէհանը,

Կոլացնեժուին ու Էալազարը, Ռակեժաղի-կին ու Կարմիր Մեխակը բացուել էին ու ժաղկել՝ հերթով, ամիս առ ամիս, ու մի ժաղիկը տեղի էր տալիս մեւսին, այնպէս որ այդտեղ տեսողութեան համար միշտ գեղեցիկ բան կար և հոտառելիքի համար՝ ախորժ բուրմունք։

— Փոքրիկ Հանը շատ բարեկամներ ունէր, սակայն դրանցից ամենաանձնուէրը՝ հաստատուն Զաղացպանը՝ Հիւզօն էր։ Իսկապէս, հարուստ Զաղացպանը դէպի փոքրիկ Հանը այնքա՞ն անձնուէր էր, որ երբէք չէր անցնի նրա պարտիզի մօտով, մինչև որ չկռանար պատի վրայից ու չկտրէր մի մեծ փունջ, կամ մի բուռ անուշահոտ խոտ և կամ չլցնէր գրպանը տալորով ու բալով, եթէ պտղի ժամանակ էր։

— Ռակեան բարեկամների համար ամեն ինչ պիտի քնդհանուր լինի, ասում էր Զաղացպանը, և փոքրիկ Հանը գլխով համաձայնութեան նշան էր անում ու ժպտում, և հպարտանում էր, որ

այլապէսք ազնիւ հայեացքների տէր բարեկամ ունի։

— Երբեմն, իսկ է, հարևաններդ տարօրինակ էին համարում, որ հարուստ Զաղացպանը փոքրիկ Հանոին փոխարէնը երբէք չի՛ հատուցանում, թէև զաղացումը հարիւր տոպրակով այլուր աւնէր ու վեց կլթան կով ու բրդատ ոչխարների մի մեծ հօտ։ Սակայն Հանոի մարդը դրանք չէին անցնում, և ոչ մի բան այնպիսի հաճոյք չէր պատճառում նրան, քան այն հրաշալի խօսքերը, որ ասում էր Զաղացպանը իսկական բարեկամների անձնազոհութեան մասին։

Ու այսպէս, փոքրիկ Հանոը աշխատում էր իր պարտիզում։ Գարնան, ամառուան ու աշնան ընթացքում նա շատ երջանիկ էր լինում, բայց երբ ձմեռն էր գալիս, նա ոչ մի քրդ էր ունենում և ոչ էլ ծաղիկ՝ շուկան տանելու, նա սկսում էր տառապել ցրտից ու քաղցից ու յաճախ անկողին էր մտնում առանց ընթրելի, եթէ չհաշուենք մի քանի հատ

տանձաչքերն ու մի բուռ կարծր ընկույզը։ Ու այսպէս, ձմեռը նա բոլորովին մենակ էր մնում, որովհետև Զաղացպանը երբէք նրան այցի չէր գալիս։

— Ինձ չի՛ սազի փոքրիկ հանտին այդի դնալ, քանի դեռ ձիւն կայ, առում էր Զաղացպանն իր կնոջ,—որովհետև, երբ մարդս վատ է ապրում, պիտի նրան մենակ թողնես, ու այցելուները նրան չպիտի անհանգստացնեն։ Այս է, յամենայն դէպս, իմ կարծիքը բարեկամութեան մասին, և ես համոզուած եմ, որ ճիշտ եմ։ Ու կուզենամ ես, մինչև գարուն գայ, ու այն ժամանակ ես նրան այցի կգնամ, և նա հնարաւորութիւն կունենայ ինձ մի մեծ կողով վարդ տալու, և դրանից նա այնքա՞ն երջանիկ կլինի։

— Դու, իսկապէս, դէպի ուրիշները շատ հոգատարն ես, պատասխանեց կինը՝ նստելով իր յարմար բազկաթոռի վրայ, շոնուս փայտի վառ կրակի առաջ,—ճշմարի՛տ, անչափ հոգատար։ Ուզակի մի

հաճոյք է լսել քո գաղութությունը բարեկամությեան մասին։ Հաստատված եմ, որ նոյնիսկ քահանան չէ կարող այնքան դեղեցիկ խօսել, ինչպէս դու, թէև նա ապրում է փառաւոր կերպով երեք յարկանի տան մէջ և ճկոյթ մասին ոչիչ մատանի է դնում։

— Իսկ չէ՞ կարելի փոքրիկ Հանին մեզ մօտ կանչել, ասաց Զաղացպանի կրտսեր որդին։—Քանի որ խեղճ Հանը վատ է ապրում, ես կուզենայի նրան տալ իմ ապուրի կէսը և ցոյց տալ իմ սպիտակ ճաղարները։

— Ի՛նչ չիմար տղայ ես, բացականչեց Զաղացպանը։—Զգիտեմ, իսկապէս, ի՞նչ օգուտ ունի քո գպրոց գնալը։ Երևում է, դու ոչինչ չես սովորի։ Չէ՞ որ, եթէ փոքրիկ Հանը գայ այստեղ ու տեսնի մեր վառ կրակը և մեր հոխ ընթրիքն ու մեր կարմիր դինու մեծ տակառը, նա կնախանձի։ Իսկ նախանձը՝ ստոկալի բան է ու ամենքի բնաւորությունը փչացնում է։ Ես, իսկապէս,

թոյլ չեմ տալ, որ Հանոյի բնաւորութիւնը վիշանայ։ Ես նրա ամենալաւ բարեկամն եմ ու միշտ պիտի հսկեմ, որ նա դայթակղութեան մէջ չընկնի։ Բացի այդ, եթէ Հանոյը գալու լինի, կարող է ինձնից խնդրել, որ ալիւր փոխ տամ, իսկ այդ ես չե՛մ անի։ Ալլ բան է ալիւրը, այլ՝ բարեկամութիւնը, և այդ երկուսը չի կարելի միմեանց հետ շփոթել՝ մանաւանդ, որ այդ բառերը տարբեր արտասանութիւն ունին և միանգամայն տարբեր իմաստ։ Ամենքի համար էլ այդ պարզ է։

— Ի՞նչ լաւ ես խօսում, տատա Զաղացպանի կինը՝ լցնելով իր համար մի մեծ գաւաթ տաք էլլ*)։—Ուզում եմ քունը տարաւ։ Կարծես թէ եկեղեցում լինեմ։

— Գործով շատե՛րն են լաւ, պատասխանեց Զաղացպանը,— իսկ խօսքով քչերը, ուրեմն խօսքը գործից աւելի դժուար է, հետևապէս, և աւելի՛ կարևոր.

*) Էլլ՝ գարեջրի տեսակ է։

— Եւ նա, խստաշունչ, սեղանի վրայից նայեց իր փոքր որդուն, որն այնքա՞ն ամաչեց ինքն իրեն, որ գլուխը խոնարհեց ու կարմրեց և սկսեց լայ՝ արտասուքը կաթեցնելով թէյի մէջ։ Սակայն, նա շատ ջանել էր, և դուք պիտի նկատէք նրան։

— Դա պատմութեան վերջն է, հարցրեց Զրամուկը։

— Ո՛չ, իհարկէ, պատասխանեց Կանեփակերը.—միայն սկիզբը։

— Ուրեմն դու ժամանակից բաւականին յետ ես մնացել, ասաց Զրամուկը։

— Ամեն մի պատմիչ, մեր օրերին, իր պատմութիւնը սկսում է վերջից, ապա առաջ է գնում դէպի սկիզբն ու վերջացնում միջին մասով։ Դա է նորագոյն մեթոդը։ Այս ամենը, անցած օրը, ես լսեցի մի քննադատից, որ մի երիտասարդ պարոնի հետ զրօսնում էր լճի շուրջը։ Այդ առիթով նա երկար խօսեց, և ես համոզուած եմ, որ նա իրաւացի է, որովհետև նա կապոյտ ակնոցով էր ու ճաղատ գլխով, և, ամեն անգամ, երբ ե-

ըիտաաարքդը մի որևէ նկատողութիւն էր անում՝ նա անմիջապէս պատասխանում էր՝ «Թուհդ։ Սակայն, խնդրեմ, շարունակի՛ր պատմութիւնդ։ Զաղացպանը իմ դուրն է գալիս շատ։ Ես կապուած եմ նրա հետ լաւագոյն զգացմունքներով, ու մենք միմիանց սաստիկ համակրում ենք։

— Հա՛, ասաց Կանեփակերը ոստոստելով մերթ այս, մերթ այն ոտի վրայ։ —Հէնց որ ձմեռն անցաւ ու գարնան ծաղիկները բաց արին իրենց բաց գեղեցիկ աչքերը՝ Զաղացպանն ասաց կնոջը, որ պիտի գնայ ու այցելի փոքրիկ Հանսին։

— Պա՛հ, ի՞նչ բարեխիղճ եմ, բացակայեցի կինը։—Դու միշտ ուրիշների մասին ես մտածում։ Բայց չմոռանաս մեծ կողովը հետդ տանել ծաղիկների համար։

Ու Զաղացպանը երկաթէ ամուր շըղթայով կապեց քամու ջաղացի առաջատարն ու իջաւ բլրից՝ կողովը ձեռին։

— Բարի լո՛ւս, փոքրի՛կ Հանս, ասաց Զաղացպանը։

— Բաքի լո՛յս, պատասխանեց Հանը՝ հենուելով բահին ու լիաբերան ժպտալով։

—Հը՞, ինչպէ՞ս անց կացրիր ձմեռս, ասաց Ջաղացպանը։

— Լա՛ւ, բացականչեց Հանը։—իսկապէս դուք ինձ մեծ լաւութիւն էք անում այդ հարցով, ճշմարի՛տ, մեծ լաւութիւն։ Ուղիղն ասած, աւելի շուտ, վա՛տ անց կացրի, սակայն այժմ դարձեալ բացուել է, և ես ուղղակի երջանիկ եմ, և իմ ծաղիկներն էլ լաւ են։

— Ձմեռս քո մասին չաճախ էինք խօսում, ասաց Ջաղացպանը,—և զարմանում էինք, թէ ինչպէ՞ս ես ապրում։

— Դուք շատ բարի էք, ասաց Հանը —այն ինչ ես փախնում էի, թէ մի գուցէ մոռացել էք ինձ։

— Հա՛ռ, ես զարմանում եմ քեզ վրայ, ասաց Ջաղացպանը,—Բարեկամութիւնը երբէք չի՛ մոռացուում։ Դա նրա բաւական կողմն է, սակայն փախնում եմ, որ դու չհասկանաս կեանքի բանա-

ստեղծութիւնը։ Իմիջի այլոց, ի՞նչ լաւ գարնան ծաղիկներ ունիս։

— Իսկապէս գեղեցիկ են շատ, ասաց Հանը.—Ու մեծ բաղդաւորութիւն է ինձ համար, որ այդքան շատ են։ Ուզում եմ շուկայ տանել ու ծախել Քաղաքագլխի աղջկան ու այդ փողով չեռ գնել իմ ձեռի տայլակը։

— Չեռ գնել տայլա՞կդ։ Ուզում ես ասել, որ դրա՞ւ էիք դրել։ Ի՞նչ չիմաք բան ես արել,

— Հա՛, բանն այն է, ասաց Հանը, որ ես տխրած էի։ Ինչպէս տեսաք, ձրմերը շատ նեղ անցաւ ինձ համար, և ես, իսկապէս, քոռ կոպէկ չունէի, որ հացի տալի։ Առաջ դրաւ դրի Կիրակի օրուայ բանկոնիս արծաթէ կոճակները, յետոյ դրաւ դրի արծաթէ շղթան, յետոյ՝ մեծ ծխաքաշս և վերջապէս՝ ձեռի տայլակս։ Բայց, հիմա, ուզում եմ չեռ գներ։

— Հա՛ես, ասաց Զաղաղպանը.—Ես իմ տայլակը քեզ կտամ. թէև այնքան էլ սարքին չէ՝ կողերից մէկը չկայ ու անխ-

ւմ շատ-շատ իրողներն էլ տեղը չեն, բայց, չընայած դրան, քեզ եմ տալիս Գիտեմ, դա մեծահոգություն է իմ կողմից ու շատերն ինձ լիմար կհամարեն, որ բաժանվում եմ իմ սայլակից, բայց ես ուրիշների նրման չեմ։ Ես համարում եմ, որ մեծահոգությունը բարեկամության հիմքն է, մանավանդ, որ ինձ հաճար նոր սայլակ եմ դնելու։ Այո՛, կարող ես բոլորովին միամիտ մնալ, որ սայլակս քեզ կտամ։

— Այո՛, իսկապես դա մեծահոգություն է ձեր կողմից, սակայն փոքրիկ հանը, ու նրա ծիծաղաշարժ կլոր դէմքը հրճվանքից փայլեց։— Ես հեշտ կերպով կնորոգեմ սայլակը, որովհետև սանը տախտակ ունի։

— Տախտա՞կ, սառը Զաղացպանը։— պա՞հ, դա հէնց այն է, ինչ ես որոնում էի շտեմարանիս տանիքի համար։ Այնտեղ մի մեծ ճեղք կայ, եթէ չկարկատեմ՝ հացահատիկներս բոլորովին կկըխպեն։ Ի՞նչ լաւ, որ չիշեցրիր։ Ուշադրությունն արժանի բան է, թէ ինչպէս

մի բաբի դոքծ ծնում է մի ուրիշը։ Ես ասուի քեզ իմ սայլակը, իսկ դու, այժմ, տալիս ես քո տախտակը։ Անշուշտ, սայլակն ասելի թանդ է, քան տախտակը, սակայն ճշմարիտ բարեկամներն այդպիսի բաների վրայ ուշադրություն չեն դարձնում։ Խնդրեմ, իսկոյն գնա՛, բե՛ր, և ես, այսօր և ես, իմ ամբարում գոքծի կկպչեմ։

— Իսկո՛յն, բացականչեց փոքրիկ Հանը և դէպի տարայը վազեց ու գուրս հանեց տախտակը։

— Այնքան էլ մեծը չէ, ասաց Ջաղացպանը զննելով տախտակը.— և վախենում եմ, որ շտեմարանիս տանիքը կարկատելուց յետոյ, տակը բան չմնայ, որ սայլակդ նորոգես. սակայն դա իմ մեղը չէ, ինքարկէ։ Իսկ այժմ, քանի որ քեզ ասուի իմ սայլակը, հաւատացած եմ, որ գու ուրախութեամբ փոխարէնն ինձ կրտայիր մի քիչ ծաղիկ։ Ահա՛ կոզովը, միայն, տե՛ս, փոքր մնի։

— Հի՞ք մնի, ասաց փոքրիկ Հանը

մի առանձին վշտով, որովհետև կողովն իսկապէս շատ մեծ էր, ու նա տեսաւ, որ եթէ լցնէր, շուկայի համար այլևս ծաղիկ չէր մնայ, իսկ նա սաստիկ ուզում էր արծաթէ կոճակները յետ գնել։

— Ինչն սուտ, պատասխանեց Ջաղացպանը,—քանի որ այսպէս քեզ տուի մատաղեցի, որ մեծ բան չէ, եթէ քեզանից մի քիչ ծաղիկ խնդրեմ։ Գուցէ ես սխալւում եմ, բայց իմ կարծիքով բարեկամութիւնը, այո՛, իսկական բարեկամութիւնը, որեղէ եսամոլութիւնից զերծ է եղել։

— Սիրելի՛ բարեկամս, իմ ամենալա՛ւ բարեկամս, բացականչեց փոքրիկ Հանը.—պարտիզիս բոլոր ծաղիկների տէրն ես. յանձնայն դէպս քո կարծիքն ինձ համար աւելի գին ունի, քան իմ արծաթէ կոճակները։— Ու վազեց նա, ու քաղեց իր բոլոր սքանչելի դարնան ծաղիկներն ու լցրեց Ջաղացպանի կողովը։

— Ցտեսութի՜ւն, փոքրի՛կ Հանս, ասաց Ջաղացպանը բարձրանալով դէպի

բլուրը՝ տախտակն ուսին ու մեծ կողովք կռանը։

— Ցանուլթի՞ւն, ասաց փոքրիկ Հանսը ու սկսեց, ուրախ-ուրախ, բրել հողը՝ նա այնքա՞ն բաւական էր տայլակիցը։

Հետեւեալ օրը նա իր գաւիթի վրայ այժեթփիկ էր մեխում, երբ լսեց Զաղացպանի ձայնը, որ կանչում էր նանապարհից։ Նա դաժ իջաւ սանդուխքից, վազեց դէպի պարտէզն ու պատի վրայից նայեց։

— Զաղացպանն էր՝ ալիւրի մի մեծ տոպրակ մէջքին։

— Սիրելի փոքրիկ հա՛նս, ասաց Զաղացպանը.— նեղութիւն չլինի՝ այս ալիւրի տոպրակն ինձ համար տա՛ր շուկան։

— Ա՜խ, շա՛տ ախուս, ասաց Հանսը.— բայց ես, իսկապէս, այսօր զբաղուած եմ։ Ես պիտի իմ բոլոր պատատուկները մեխեմ, բոլոր ծաղիկները ջրեմ և նրանց քաղը հանեմ։

— Ուրեմն այդպէ՛ս, ասաց Զաղացպանը։— Կարծում եմ, քանի որ քեզ եմ

տալիս իմ տպագիրը՝ քա կոզմից ամարդ-
գութիւն կլինի խնդիրս մերժել։

—Օ՜հ, դա՞ ինչ խօսք է, բայականչեց
փոքրիկ Հանաբ։—Ինձանքուս երբէք չէի
ուզիլ ամարդի լինել։—Ու նեբա վազեց
գլխաբկի հետեւից, ու մեծ տոպրակն ու-
սին գնաց դէպի շուկան։

— Մի սովալի ոօթի օր էր, հանդա-
պարը՝ սառուցիկ փոշուս, և Հանաբ, վեր-
ևրարդ վերատուութիւնին դեռ չհասած՝ այն-
պէ՛ս յոգնեց, որ ստիպուած էր նստել ու
հանգստանալ։ Բայց և այնպէս նա քաջի
պէս գնում էր, և, վերջապէս, հասաւ
շուկան։ Մի աս ժամանակից յետոյ, բա-
ւականին լաւ գնով, ծախեց ալիւրի
տոպրակն ու խիզոն վերադարձաւ դէպի
տուն, որովհետև վախենում էր, որ, եթէ
ուշանար, կարող էր հանդիպարին ուս-
զակների հանդիպել։

— Ի՞նչ ծանր օր էր, ասաց փոքրիկ
Հանան ինքն իրեն, երբ անկողինը մտաւ.
—բայց ես ուրախ եմ, որ Զաղացպանի
խօսքը չկատարեցի, որովհետև նա իմ ա-

մեծապես բարեկամն է, ու, բայի այլ, իր սայլակն ուղուծ է տալ ինձ։

Հետեւեալ առաւօտը՝ կէսուխ, Զաղացպանը եկաւ ալիւրի փոդը տանելու, բայց Հանը շատ յոգնած լինելուց՝ գնա անկոդնուն էր,

— Ադե՛ւ խօսք, ասաց Զաղացպանը. —դու շատ ժոյլ ադայ ես Իսկապես, քանի որ սայլակս քեզ եմ տալիս, կարծեցի, թէ դու աւելի եռանդով պիտի աշխատէիր։ Պարապ մնալը մեծ մեղք է, ես, իհարկէ, չեմ սիրում, երբ իմ բարեկամներից որևէ մէկը պարապ կամ ժոյլ է լինում։ Զնեղանաս, որ քեզ հետ խօսում եմ բաւականին անկեղծ։ Իհարկէ այս խօսքերը մտքովս չէին անցնի, եթէ քո բարեկամը չլինէիր։ Էլ ի՞նչ օգուտ հասնաց է բարեկամութեան յաւուրթիւնը, եթէ չես կարող շիտակօրէն ասել այն, ինչ մտածում ես։ Հանոյախօսել, դուր գալ ու շողոքորթել՝ կարող է ամեն մարդ, իսկ ճշմարիտ բարեկամը միշտ անդուր է խօսում և դու պատեռե-

լուց չի՛ վախենում Ցիրուի, իսկական բարեկամը պերազասելի է համարում այդ, որովհետև գիտէ, որ դրանով նա լաւութիւն է անում։

— Ախտա, շա՛տ ափսոս, ասաց փոքրիկ հանը՝ աչքերը արտրելով ու դիշերուայ դղեակն հանելով.— բայց ես այնպէս էի լսել, որ ուզեցի մի փոքր պատկել անկողնումս ու լսել թռչունների երգը։ Գիտէ՞ք դուք, որ, ամեն անգամ, թռչունների երգը լսելուց յետոյ, ես աւելի լաւ եմ աշխատում։

— Որ այդպէս է՝ շատ ուրախ եմ, ասաց Զաղացպանը ձեռը դարձնելով փոքրիկ հանսի մէջքին.— որովհետև ես ուզում էի, որ դու, հաշնուելուդ պէս, ջաղացս դայիր ու շինէիր շտեմարանիս տանիքը։

Խեղճ հանը շատ էր ուզում իր պարտէզը գնալ ու աշխատել, որովհետև ծաղիկներն, ահա երկու օր էր, չէին ջրուել, բայց չէր ուզում Զաղացպանին մերժել, քանի որ իր լաւ բարեկամն էր։

— Ձեր կարծիքով ամարդու թիւն կլինէր իմ կողմից, եթէ ասէի, որ զբաղուած եմ, հարցրեց նա երկչոտ ու ամօթխած ձայնով։

— Իհարկէ, այո՛, պատասխանեց Զաղացպանը,— կարծեմ մի մեծ բան չեմ խնդրում քեզանից, մանաւանդ, որ ուզում եմ քեզ տալ իմ սայլակը։ Սակայն, իհարկէ, եթէ մերժես խնդիրս՝ կղնամ և ինքս կանեմ։

— Օ՜հ, ո՛չ երբէք, բացականչեց փոքրիկ հանաբ։ Ու ցատկեց անկողնուցը, հագաւ շրջերն ու դնաց դէպի շտեմարանը։

Նա՝ ողջ օրը՝ մինչև արևի մայր մտնելը, աշխատեց, և արևի մայր մտնելու ժամանակ եկաւ Զաղացպանը՝ տեսնելու, թէ ինչ է արել։

— Ի՞նչ, մի՞թէ արդէն ժամկել ես ոտնիքի ճեղքը, փոքրի՛կ հանա, բացականչեց Զաղացպանն ուրախ ձայնով։

— Արդէ՛ն, պատասխանեց փոքրիկ հանաբ՝ թջնելով ուանդուխքից։

— Ա՜հ, ասաց Զաղացպանը.— չկայ ա-

Հելի քաղցք աշխատանք, քան այն, որ անուանեմ ես ուրիշի հաճար։

— Իսկապէս մեծ շնորհ է ինձ հաճար, որ ձեզ լսում եմ, պատասխանեց փոքրիկ հանար՝ նստելով ու ճակատը սրբելով.— շատ մեծ շնորհ Բայց ես վախենում եմ, որ երբէք չպիտի ունենամ այնպիսի դեղեցիկ դաղափարներ, ինչպէս ձերն է։

— Օ՜հ, այդ էլ կունենաս, ասաց Զաղացպանը.—միայն դու պիտի ուելի՛ աշխատես Այժմ դու ունիս բարեկամուելեան միայն դործնական կողմը, երբ և՝ իդէ դու ոչ էր կլինես նաև տեսական կողմին։

— Իսկապէս կարծում եք, որ կլինե՞մ, հարցրեց փոքրիկ հանար։

— Երբէք չեմ կասկածել, պատասխանեց Զաղացպանը.—իսկ այժմ, քանի որ շինել ես իմ տանիքը, ուելի լաւ կանես՝ դնեա տուն ու հանդստանաս, որովհետև վաղն ուզում եմ ոչխարներս քեզ տալ, որ տարբ տանես։

Խեղճ հանար վախեցաւ որպէս է բան ու-

ռարկել, ու, միւս օրը, Զաղացպանն իր ոչխարները քշեց նրա խրճիթի առաջը. և Հանը նրանց հետ ճանապարհ ընկաւ դէպի սարը։ Նա ողջ օրը կորցրեց սարը գնալու և գալու վրայ, ու երբ վերադարձաւ՝ նա այնքա՜ն էր յոգնել, որ անմիջապէս քնեց իր անմիջի վրայ ու մինչև լոյս չկարողացաւ արթնանալ։

— Ի՞նչ լաւ պիտի անց կացնեմ ժամանակս այսօր իմ պարտիզում, առայ նա ու անմիջապէս գնաց աշխատանքի։ Բայց նա նորից չկարողացաւ զբաղուել իր ծաղիկներով, որովհետև նրա բարեկամը, Զաղացպանը, ամեն անգամ, գալիս ու նրան զանազան յանձնարարութիւններով հետաւ տեղեր էր ուղարկում կամ իրեն օգնելու համար ջաղացը առնում։ Փոքրիկ Հանը, երբեմն, սատկիկ վիրաւորւում էր, որովհետև վախենում էր ծաղիկները մատնեն, թէ նա նրանց մոռացել է, բայց այն մտքը, որ Զաղացպանն իր ամենաքաջ բարեկամն է՝ ճխլիթարում էր նրան։

— Բացի այդ, սատամ էր նա.— Զաղացպանն ինձ է ուզում տալ իր սայլակը, իսկ դա կատարյալ վնասանձնություն է նրա կողմից։

Ու այդպես փոքրիկ հանաք, օրն իր բուն, աշխատում էր Զաղացպանի համար, իսկ Զաղացպանը գանազան հրաշալիքներ էր պատմում բարեկամության մասին, ու հանաքը գրի էր առնում իր նկատողությունն տեսքում և գիշերները սերտում, որովհետև նա շատ լավ աշակերտ էր։

Մի անգամ, երեկոյան, փոքրիկ հանաքը նստել էր իր օջախի առաջ, երբ մեկը բաղխեց դուռը։ Մի գաժան գիշեր էր և քամին այնպիսի կատաղությամբ էր փչում ու առնում տան շուրջը, որ նրան թվաց, թե դա դուռը չէր, այլ լոկ փոթորիկը։ Բայց, ահա՛, լսեց երկրորդ հարվածը, ապա՝ երրորդը՝ ավելի ուժգին, քան առաջինը երկուսը։

— Երևի մի որևէ անհայր ուղևոր է, սակայ փոքրիկ հանան ինքն իրեն՝ վազելով դեպի դուռը։

Անտեղ կանգնած էր Զաղացպանը՝ մի ձեռին լապտեր, միւսին՝ մի հաստ փայտ։

— Սիրելի՛ փոքրիկ հանա, կանչեց Զաղացպանը.—մի մեծ ծառայութիւն է պատահել ինձ։ Փոքրիկ տղաս վալը է ընկել սանդուխքից ու վնասուել, ու ես գնում եմ բժշկի հետևից։ Իսկ նա այնքան հեռու է ապրում, և գիշերն էլ այնքան վատ է, որ իզուր չլինեցի, թէ աւելի լաւ կլինի, եթէ իմ տեղ դու գընաս։ Դու գիտես, որ իմ տայլակը քեզ եմ տալու, այնպէս որ արդարութեան դէմ չի լինի, եթէ դու փոխարէնը մի որևէ բան անկիր ինձ համար։

— Անշու՛շտ, բացականչեց փոքրիկ հանան.—Ձեր ինձ մօտ դալը ես ուզղակի մի շնորհ եմ համարում, ու ես անմիջապէս կգնամ։ Բայց դուք պիտի շնորհէք ինձ ձեր լապտերը, որովհետև այնքան մութ է գիշերը, որ, վախենում եմ, դար ու փոսի մէջ ընկնեմ։

— Ախտա՛ս, շա՛տ ափսոս, պատասխանեց Զաղացպանը,—բայց սա իմ նոր

լապտերն է, ու մեծ գրկանոցը կլինի ինձ համար, եթէ մեր մի բան պատահի։

— Դէհ, ի՞նչ արած, առանց լապտերի կգնամ, պատասխանեց փոքրիկ Հանսը, ու գոգաւ իր ձեռ մուշտակն ու կարմիր տաք գլխակը, ու վիզը մի շարֆի կապեց և ճանապարհ ընկաւ։

Ի՞նչ կատաղի փոթորիկ էր։ Դիշերն այնքան մութ էր, որ փոքրիկ Հանսը հազիւ հաց էր տեսնում, ու քամին՝ այնքան ուժգին, որ նա գժուարութեամբ էր կարողանում տաքի վրայ կանգնել։ Իսկ նա, ունկնդիր, մօտ երէք ժամ քայլելուց յետոյ, հասաւ բժշկի տունը և բակէնց դուռը։

— Այդ ո՞վ է, կանչեց բժիշկը՝ հանելով գլուխը ննջարանի պատուհանից։

— Փոքրիկ Հանսը, բժի՛շկ։

— Ի՞նչ ես ուզում, փոքրի՛կ Հանս։

— Զապցպանի տղան վայր է ընկել տանդուխից ու վնասուել, ու Զապցպանը խնդրում է, որ խսկոյն գաք։

— Տա՛ր քաւ, ասաց բժիշկն ու պատ-

ուէրից, որ բերեն իր ձին, մեծ կօշիկները, լապտերը, և սանդուխքից իջաւ ու ձին քշեց ուղիղ Զաղացպանի տունը, թողնելով փոքրիկ Հանսին հեռուից վազելիս։

Մինչ դեռ փոքրիկն աւելի ու աւելի էր սաստկանում, ու անձրևը թափւում՝ հեղեղի նման, ու փոքրիկ Հանսը չէր կարողանում տեսնել, թէ ո՞ւր է գրնում ու չեռ էր մնում ձիւրը։ Թեռոյ կոքցրեց ուղին ու քնկաւ ճահիճը, որ շատ վտանգաւոր տեղ էր, որովհետև լիքն էր խորը փոսերով, և այդտեղ խեղճ փոքրիկ Հանսը խեղդուեց։ Հետևեալ օրն այծապանները գտան նրա դիակը մի ջրով լիքը փոսի մէջ օրօրուելիս ու բերան խրճիթը։

Բոլորը ներկայ էին փոքրիկ Հանսի թաղմանը, որովհետև նա յայտնի էր ժողովրդին, իսկ Զաղացպանը գլխաւոր սրդաւորն էր։

— Քանի որ ես էի նրա ամենամտաւ բարեկամը, ասում է Զաղացպանը.—

ուսաքի հարկը պահանջում է, որ ամենանայլաս տեղն էլ իմը լինի։

Ու նա քայլում էր սգերթի առաջն ընկած՝ եղկայն սև թիկնոցով, ու, ժամանակ առ ժամանակ, մի մեծ թաշկինակով սրբում էր աչքերը։

— Փոքրիկ հանան անկասկած բոլորի համար էլ մեծ կորուստ է, ասաց Դարբինը, երբ թաղումն արին վերջացան ու փոսիկ կերպով նստեցին պանդոկում՝ խմելու համեմած գինի ու քաղցր կեքս ուտելու։

— Մեծ կորուստ է, յամենայն դէպս, ի՛նձ համար, պատասխանեց Զաղացպանը. —որովհետև ես, համարեա՝ թէ, նրան էի տուել իմ սայլակը, իսկ այժմ ես ուղղակի չգիտեմ, թէ ի՛նչ պիտի անեմ։ Տանս մէջ նա ինձ խանդարում է և այնպիսի խայտառակ դրութեան մէջ է, որ եթէ ծախելու լինեմ՝ միևնոյն է ոչինչ չեն տայ։ Այսուհետև, իսկապէս, ես շատ ըզգոյշ պիտի լինեմ ուրիշին նստէր տալու

ժամանակ։ Իր վեհանձնութեան համար մարդս միշտ տուժում է։

— Հա՞, ասաց Զրամուկը երկար ընդմիջումից յետոյ։

— Հա՛, վերջացաւ, ասաց Կանեփակերը։

— Իսկ ի՞նչ եղաւ Զաղացպանը, հարցրեց Զրամուկը։

— Ո՞հ, ես իսկապէս չգիտեմ, աւելացրեց Կանեփակերը.—և իսկն։ ասած, իմ ի՞նչ գործն է։

— Իսկոյն երևում է, որ քո բնաւորութեան մէջ կարեկցութեան դիծ չկայ, ասաց Զրամուկը։

— Վախենում եմ, որ դու չնկատես պատմութեանս բարոյական իմաստը, ասաց Կանեփակերը։

— Ի՞նչը։

— Բարոյական իմաստը։

— Ուզում ես ասել, որ այս պատմութիւնը բարոյական իմա՞ստ ունի։

— Անշո՛ւշտ, ասաց Կանեփակերը։

— Իսկապէս, ասաց Զրամուկը սաստիկ զայրացած.—իմ կարծիքով այդ պի-

տի ասէիր նախ քան պատմութիւնը։ Եթէ ասէիր, ես, իհարկէ, քեզ չէի լսիր։ Իսկն ասած, ես, այն քնեցողի պէս, կասէի՝ «թո՛ւ»։ Թէև հիմա էլ կարող եմ ասել—Ու նա իր ձայնի ամբողջ ուժովը դուռից՝ «Թուհա, պոչը շարժեց ու բունը մտաւ։

— Իսկ ի՞նչպէս դուր եկաւ քեզ Չրքամուկը, հարցրեց Բաղը, մի քանի րոպէից յետոյ լռելով դէպի նա։—Նա բաւականին լաւ կողմեր ունի, իսկ ինչ ինձ է վերաբերում, ես ունիմ մայրական դութ, և հէնց որ պատաւ աղջիկ եմ տեսնում, աչքերս լցնում են արտասուքներով։

— Վախենում եմ՝ չլինի թէ վշտացրի նրան, պատասխանեց Կանեփակները.—բանն այն է, որ ես արի բարոյական իմաստով պատմութիւն։

— Ա՜խ, դա միշտ էլ շա՛տ վատն է, ասաց Բաղը։

Ու ես միտքս գամեցի հանձնարարեցի ես հետը։

ԵՐԱՆԱԻՈՐ ՌՈՊԷՏԸ

ՆՇԱՆԱՒՈՐ ՌՈԿԷՏԸ

Թագաւորի որդին ուզում էր ամուսնանալ, ու ամեն տեղ տիրում էր խրնդութիւն։ Նա մի ամբողջ տարի սպասել էր իր հարսնացուին, ու, վերջապէս, նա եկել էր։ Նա մի Ռուս Պրինցուհի էր ու ողջ ճանապարհը, Ֆինլանդիայից սկսած, անցել էր հիւսիսային ցօթ եղջերու քաշած սահնակի մէջ։ Սահնակը նման էր մի մեծ ոսկէ կարապի, ու նրա թեւերի մէջ տեղը բազմել էր ինքը՝ փոքրիկ Պրինցուհին։ Կնգմենի երկայն վերնազգեստը հասնում էր մինչև ոտները, գլխին դրել էր արծաթէհիւս դիպակից փոքրիկ գլխարկ, ու դունատ էր՝ ինչպէս Զիւնէ Պալատը, ուր միշտ ապրել էր։ Նա այնքան դունատ էր, որ երբ փողոցներովն անցաւ՝ ամենքը զարմացան. «Նա նման է սպիտակ վարդի», բացա-

կանչեցին նրանք ու պատշգամբներից ժողովուրդ ցանեցին նրա վրայ։

Դղեակի մուտքի մոտ, նրան դիմավորելու համար, սպասում էր Պրինցը։ Նրա աչքերը երազուն էին՝ մանուշակի պես, ու մազերը՝ նման մաքուր ոսկու։ Երբ նա տեսավ հարսնացուին, մի ծնկով չոքեց ու համբուրեց ձեռը։

— Ձեր նկարը չքնաղ է, շշնջաց նա։ —Իսկ դուք ավելի չքնաղ եք, քան ձեր նկարը։ Ու փոքրիկ Պրինցուհին շառագունեց։

— Առաջ նա նման էր սպիտակ վարդի, ասաց մի երիտասարդ Մանկլուքին իր հարևանին։—Իսկ այժմ նման է կարմիր վարդի։—Ու ողջ Արքունիքը հրճվեց։

Երեք օր շարունակ ամենքի բերանին էր՝ «Սպիտակ վարդ, Կարմիր վարդ, Կարմիր վարդ, Սպիտակ վարդ»։ Ու հրամայեց Թագավորը, որ Մանկլուքիկի առճիկը երկնագույն Գանի որ նա տեսակ առճիկ չէր ստանում, ապա դր-

բանից նա ոչ մի օգուտ չքաղեց, սակայն դա մեծ շնորհ էր համարվում։ Եվ բան պատշաճել յայտարարեցին «Պալատական լրագրում»։

Երեք օրից յետոյ կատարեցին հարսանիքը։ Դա մի շքեղ հանդէս էր. ու նորապսակները թեանցուկ անցան ալ թաւշէ ամպհովանու տակ, որ ասեղնադարծել էին մանր մարգարիտներով։ Սպա կայացաւ Սրքայական Բանկէտը, որ տեւեց ուղիղ հինգ ժամ։ Պրինցն ու Պրինցուհին նստել էին Մեծ Սրահի ճակատին ու խմում էին պայծառ բիւրեղէ դաւաթից։ Այդ դաւաթից կարող էին խմել միմիայն իսկական սիրահարները, որովհետև, երբ կեղծ շրթունքներ էին կպչում, դաւաթն իսկոյն դարշանում էր, մռայլւում ու միդով ծածկւում։

— Պարզ է, որ նրանք սիրում են իրար, ասաց փոքրիկ Մանկլաւիկը.— պարզ՝ ինչպէս բիւրեղը։—Ու Թագաւորը երկրորդ անգամ կրկնապատկեց նրա ամբիկը։

— Ինչպիսի՜ շնորհ, բացականչեցին բոլոր պալատականները։

Բանկէտից յետոյ պիտի լինէր Պատահանդէսը։ Նորապսակները պիտի պարէին միասին Վարդ-պարը, ու Թագաւորը խոստացել էր նուագել սրինգը։ Նա շատ լաւ էր նուագում, բայց ոչ ոք չէր համարձակւում այդ ասել, որովհետև նա Թագաւոր էր։ Իսկապէս նա միայն երկու եղանակ գիտէր ու երբէք չէր տարբերում, թէ երկուսից ո՞րն է նուագում։ Բայց դա կարևոր չէր, որովհետև ինչ էլ որ նա անէր, ամենքը պիտի բացականչէին.

— Սքանչելի՛ է, սքանչելի՛։

Ծրագրի վերջին հանգրը հսկայական հրախաղութիւնն էր, որ պիտի լինէր ճիշտ կէս գիշերին։ Փոքրիկ Պրինցուհին կհանքուծը երբէք հրախաղութիւն չէր տեսել, ու Թագաւորը հրամայել էր, որ հարսանիքին Աչքայական հրագէտը ոչ մի ջանք չխնայի։

— Ինչի՞ են նման հրթիռները, հար-

ցրեց նա Պրինցին մի առաւօտ, երբ ըգ-
բօսնում էր տերբատում։

— Հրաշալի՛ այլի, ասաց Թագաւորը,
որ միշտ պատասխանում էր իրեն չուղ-
ղուած հարցերին,—միայն աւելի բնա-
կան են։ Ինձ համար նրանք աւելի գե-
բաղաձելի են, քան աստղերը, որոնցիցն
միշտ գիտես, թէ երբ պիտի երևան, ու
չքնաղ են՝ իմ սրնգի նուագի պէս։ Ան-
շուշտ դուք այդ կտեսնէք։

Ու Արքայական Պարտիզի վերջում մի
մեծ տախտակամած էր շինած ու, հէնց
որ, Թագաւորական Հրագէտը ամեն ինչ
տեղաւորեց, հրթիռները սկսեցին խօսել
միմիանց հետ։

— Աշխարհս, իրաւ որ, սքանչելի է,
բացականչեց փոքրիկ Infanta-ն։—Նա-
յէ՛ք այս դեղին կակաչներին։ Եթէ ան-
գամ իսկական պետարդներ էլ լինէին՝
աւելի հաճելի չէին լինի։ Ես շատ ու-
բախ եմ, որ ճանապարհորդութիւն եմ
արել։ Ճանապարհորդութիւնը հրաշալի
կերպով կատարելագործում է մտածող-

թիւնն ու ապատուած մթաթը կանխակալ կարծիքներից։

— Արքայական Պարտէզը դեռ ես աղջ աշխարհը չէ, դո՛ւ, տխմար Տաղրատուր, ասաց Հռոմկական մեծ Տոմը.— Աշխարհս մի հսկայական տարածութիւն է, ու երեք օր կտեր, մինչև որ լիովին տեսնեա։

— Սմեն տեղ, որ հաւանում եմ, աշխարհ է քեզ համար, բացականչեց մատաղահ Հրանիւրը, որ ծնած օրից կապուած էր եղևնու մի հին արկղից ու ինքն իրեն, պաքծենում էր իր կոտրած սրտի վրայ։—Սակայն սէրն այլևս ընդունուած չէ։ Բանաստեղծները սպանեցին։ Այնքան շատ գրեցին նրա մասին, որ այլևս ոչ ոք նրանից չի հաւատում, ու ես ամենևին չեմ զարմանում։ Ճշմարիտ սէրը տառապում է լու։ Ցիշում եմ, մի անգամ ես... բայց դա հին բան է։ Ռոմանտիզմն այժմ անցեալին է պատկանում

— Սեռաբ բան է, ասաց Հռոմկական

Տոմբ.—Ռոմանտիզմը երբէք չի մեռնում։ Նա նման է Լուսնին, ու ապրում է յաւիտեան։ Հարսն ու փեսան, զոր երինակ, ուխտում են իրար շատ խորը։ Այդ ամենը լսեցէ այս առաւօտ փաթեթաթղթից շինած մի փամփուշտից, որը պատահմամբ նոյն արկղումն էր, ուր ես էի, ու գիտէր պոլատակն վերջին հորութիւնները։

Բայց Հրանիւը շարժեց գլուխը.

— Ռոմանտիզմը մեռել է, Ռոմանտիզմը մեռել է, Ռոմանտիզմը մեռել է, շշնջաց նա։ Նա այն մարդկանցից էր, որոնք կարծում են, եթէ միևնոյն բանը յաճախ ու շարունակ կրկնես՝ վերջ ի վերջոյ ճշմարտութիւն կդառնայ։

Յանկարծ լուեց մի սուր ու չոր հարուած, ու ամենքը կեռ նայեցին։

Այդ ձայնը հանեց մի բարձրահասակ ու դոռոգաստես, ոսկէս, որ կպչուած էր մի երկար ձողի ծայրին։ Նա միշտ, մի որևէ նկատողութիւն անելու առաջ,

հազում էր, որպէսզի վրան ուշադրութիւն դարձնեն։

— Ը՛հրմ, ը՛հրմ, ասաց նա, ու ամենքը լռեցին, բացի խեղճ Հրանիւից, որ անխօս շարժում էր գլուխն ու շշնջում.

— Ռոմանտիզմը մեռել է։

— Կարդի՛ն կացէք, կարդի՛ն կացէք, գոչեց մի Պեռարդ։ Նա մի քիչ քաղաքաղէտ էր ու տեղական քնարութիւնների ժամանակ միշտ աչքի ընկնող դեր էր խաղում, ուստի և սովոր էր զուտ Պարլամենտական արտայայտութիւններով։

— Մեռել է ընդ միշտ, շշնջաց Հրանիւն ու քնեց։

Հէնց որ տիրոջ խօսքն լռութիւն, Ռոկէտը հազաց երբորդ անգամ ու սկսեց։ Նա խօսում էր մեղմ ու յստակ ձայնով, ինչպէս եթէ թելադրելիս լինէր իր յուշատետրն ու շարունակ նայելիս նրա ուսերի վրայից, ում թելադրում էր։ Իրօք, նրա ձեռքը երևելի էին։

— Ինչքա՞ն երջանիկ է Թաղուորի

որդին, նկատեց նա, որ նա պատկառում է ճիշտ այն օրը, երբ ինձ պիտի արձակեն։ Եթէ, իրօք, առաջօրէն են յարմարեցրել, դրանից էլ լաւ առիթ չէր կարող լինել։ Բայց Պրինցները միշտ բազդաւոր են։

— Ասատուա՞ծ իմ, ասաց փոքրիկ Մարգարիտը.—ես միանգամայն այլ կերպ էլ մտածում՝ որ մեզ պիտի արձակեն ի պատիւ Պրինցի։

— Գուցէ քե՛զ, պատասխանեց նա.— իսկապէս չեմ էլ կասկածում, որ այդպէս է. իսկ այլ է իմ բանը։ Ես շատ նշանաւոր Ռոկէտա եմ և ծնուել եմ նշանաւոր ծնողներից։ Մայրս իր ժամանակի ամենահռչակաւոր Հրանիւն էր ու անուն էր հանել իր նազելի պարով։ Իր հասարակական մեծ ցոյցի ժամանակ, նա տասնինն անգամ պտոյտ եկաւ, մինչև որ հանգաւ, ու ամեն մի պտոյտին նա օրում եօթ վարդագոյն ասող արձանիկ։ Նրա արամագիծը երեք ու կէս Ֆուտ էր ու շինած էր լաւագոյն վաւօրից։

հայրս, ինձ պէս, Ռոկէտ էր ու Ֆրանսիական ծագում ունէր։ Նա այնքան բարձր էր թռչում, որ մարդիկ վախենում էին՝ չլինի թէ ալեւս ցած չիջնի։ Նա ցած էր իջնում տակաւին, որովհետեւ բնաւորութեամբ հեզ էր, ու իր բուսափայլ վայրէջքը կատարում էր ոսկէ տարփով։ Նրա խաղի մասին լրագրները շատ գովասանական խօսքեր գրեցին։ Նոյն իսկ Պարատական Լրագիրը նրան վերագրեց Հրաշխութեան տրաւեսի յաղթանակը։

— Այսինքն Հրաշխութեան, Հրաշխութեան, ասաց Բէնգալեան Կրակը։ —Գիտեմ, որ կոչւում է Հրաշխութիւն, որովհետեւ ես այդ տեսել եմ գրած իմ սեփական աչքերով։

— Իսկ ես ասում եմ՝ Հրաշխութիւն, պատասխանեց Ռոկէտը խստօրէն, և Բէնգալեան կրակն այնպէս ընկճուեց, որ սկսեց յոխորտալ փոքրիկ ծաղրանքների առաջ, ցոյց տալու համար, որ ինքը կարեւոր ոչ է։

— Ուզում էի ասել, շարունակեց Ռոկէար. ուզում էի ասել, դա՛, ի՞նչ էի ուզում ասել։

— Դու խօսում էիր քո մասին, պատասխանեց Հռոմէական Մոմը։

— Անպէտք։ Ես գիտեմ, որ գեղարքրքական նիւթի մասին էի խօսում, երբ ինձ այնպէս կոպիտ կերպով ընդհատեցին։ Առհասարակ ես սուում եմ կոպիտ ու ադեղ վարքմունքը, որովհետև ես վերին աստիճանի զգայուն եմ։ Ոչ որ աշխարհիս երեսին այնպէս զգայուն չէ, ինչպէս ես, ես այդ հաստատ գիտեմ։

— Ի՞նչ բան է զգայուն մարդը, ասաց Պետարդը Հռոմէական Մոմին։

— Դա մի մարդ է, որը կոխ է տալիս ուրիշի ոտի մատը, որովհետև իր ոտի վրայ կոշտ ունի, պատասխանեց Հռոմէական Մոմը մեղմ շշուկով։ Եւ Պետարդը քիչ մնաց ծիծաղից պայթի։

— Ասա՛ խնդրեմ, ինչո՞ւ ես ծիծաղում, գեղարքրքրուեց Ռոկէար։—Ես չե՛մ ծիծաղում։

— Ես ձիժուղում եմ, որովհետև երջանիկ եմ, պատասխանեց Պետրոսը։

— Պատճառը շատ հասարակ է, բացկացած ասաց Ռոկֆոր։—Ինչ իրավունքով ես դու երջանիկ։ Դու պիտի ուրիշների մասին մտածես. իսկապես դու պիտի մտածելիս լիս մասին։ Ես միայն լիս մասին եմ մտածում և ուզում եմ, որ բոլորն էլ նույնն անեն։ Ահա թե ինչ է նշանակում կարեկցությունն։ Դա մի սքանչելի առաքինություն է, որից լիս մեջը կայ խոշոր չափերով։ Ենթադրենք, օրինակի համար, այս երեկոյ ինձ մի բան պատահի՝ ի՞նչ դժբաղդություն կլինի դա բոլորի համար։ Պրինցն ու Պրինցեսուհին միանգամայն կանբաղդանային, նրանց ողջ ամուսնական կեանքը կթունավորուէր, ու ինչ վերաբերում է թագավորին, ես գիտեմ, որ չէր դիմանայ այդ ցավին։ Իսկապես, երբ ես սկսում եմ կշռադատել լիս դիրքի կարևորությունը՝ պրոտեստել չափ յուզվում եմ։

— Եթէ դու ուզում ես ուրիշներին

հաճույք պատճառել, բացակայեց Հռոմէական Տոմը, — քեզ պիտի չոր պահեմ։

— Անշուշտ, դուք Բէնդալեան Կրակը, որն արդէն լաւ տրամադրութեան մէջ էր։ — Ելդ է պահանջում սովորական առողջ դատողութիւնը։

— Սովորական դատողութիւնը, ինչպէս չէ, ասայ Ռոկէտը դայրացած, — բայց դուք մոռանում էք, որ ես շատ անուսումն եմ և շատ էլ նշանաւոր։ Այո՛, սովորական առողջ դատողութեան տէր կարող է լինել ամեն մէկը, եթէ միայն դուրկ ֆ երևակայութիւնից։ Իսկ ես ունիմ երևակայութիւն, որովհետև ես երբէք չեմ մտածում առարկաների մասին այնպէս, ինչպէս նրանք իրապէս գոյութիւն ունին։ Ես միշտ նրանց մասին մտածում եմ այնպէս, ինչպէս եթէ նրանք միանգամայն այլ լինէին, իսկ ինչ վերաբերում է ինձ չոր պահելուն, բաւ երևոյթին այսաեղ չի դանուի մէկը, որ կարողանար գնահատել զգալուն խառնուածքը։ Բարեբաղդաբար, դա իմ փոյթը

չէ։ Միակ բանը որ մաքրուս կեանքի նեցուկն է, դա այն դիտակցութիւնն է, որ ամենքն էլ անտարմաան տոր են քեզանից, և այդ զգացմունքը ես միշտ դաբդացրել եմ իմ մէջ։ Սակայն դուք ամենքդ էլ անախրտ էք։ Դուք այստեղ այնպէս էք ծիծաղում ու խնդում, կարծես թէ Պրինցն ու Պրինցուհին ներ չլինին պատկուած։

— Դէհ, լա՛ւ, գոչեց մի փոքրիկ հրաղուդ.—ինչո՞ւ չծիծաղեք։ Դրանից էլ լաւ առիթ, երբ ես կարող եմ թռչել դէպի վեր ու պատմել աստղերին նրանց մասին ամեն ինչ։ Դուք կտեսնէք, ինչպէս նրանք կշողան, երբ ես պատմեմ չքնաղ հարսնացուի մասին։

— Ա՜խ, ի՜նչ դառնիկ կարծիք ունիք դուք կեանքի մասին, տատդ Ռոկէտը,—սակայն ես հէնց այդպէս էլ ասում էի։ Ձեր մէջ ոչի՛նչ չկայ. դուք սին ու դատարկ էք։ Դիցուք թէ Պրինցն ու Պրինցուհին կամենում են գնալ ապրելու համար մի երկիր, ուր մի խոր գետ

կայ, և զինյուք՝ նրանք ունին մի հատիկ զաւակ, մի փոքրիկ շիկահեր, մանուշակագոյն աչքերով տղայ՝ ինչպէս ինքը՝ Պրինցը։ Եւ զինյուք՝ մի օր նա գնում է զբօսնելու իր դայեակի հետ։ Եւ զինյուք թէ դայեակը քնում է շամքուկի ծառի տակ։ Եւ զինյուք՝ փոքրիկ տղան քնկնում է խոր գետի մէջ ու խեղդւում։ Սարսափելի՜ դժբաղդութիւն։ Խեղճ մարդիկ, կորցնել միակ որդո՜ւն։ Խսկապէս սոսկալի՜ է։ Եռ երբէք չէի զիմանայ։

— Սակայն նրանք դեռ չեն կորցրել իրենց միակ զաւակին, ասաց Հռամէսակոն Մանը.— և ոչ էլ հետներն անբաղդութիւն է պատահել։

— Ես ամենևին չասացի, թէ պատահել է, պատասխանեց Ռակէտը.— Ես ասացի, որ կարող է պատահել։ Եթէ նրանք կորցրած լինէին իրենց միակ զաւակին, այլևս դրա մասին կարիք չէր լինի խօսելու։ Ես ասում եմ նրանց, որոնք թափուած կաթի համար լաց են լինում։ Իսկ երբ ես մտածում եմ, որ

Նրանք կարող էին կորցնել իրենց միակ զաւակին, ուղղակի զգացում եմ։

— Այդ մէկը ճիշտ է, բացականչեց Բէնդալեան Գրակը.—իրօք, դու ամենադիւրացդդաց անձնաւորութիւնն ես, որին երբ և իցէ հանդիպել եմ։

— Իսկ դու ամենակոպիտ անձնաւորութիւնն ես, որին ես երբ և իցէ հանդիպել եմ, ասաց Ռոկէտը.—ու չես կարող դու հասկանալ իմ մտերմութիւնը Պրինցի հետ։

— Չէ որ դու նրան չես ճանաչում, մրթմրթաց Հռոմէական Մոմը։

— Ես ամենևին չեմ ասել, թէ ճանաչում եմ, պատասխանեց Ռոկէտը։— Ինձ թւում է, որ եթէ նրան ճանաչէիր ես նրա բարեկամը չէիր լինի։ Շատ վրատանգաւոր է, երբ բարեկամիդ ճանաչում ես։

— Աւելի լաւ կանէիր, եթէ քեզ չար պահէիր, ասաց Հրապուռդը.—դա շատ անհրաժեշտ է։

— Աւելի անհրաժեշտ է քե՛զ համար.

դրա մասին ես չեմ կասկածում, պոռաս-խանեց Իսկէտը.—իսկ ես լալիս եմ, երբ լացս գալիս է։

Եւ նա, իրօք, լայ եղաւ խսկական արտասուքներով, որոնք գլորուեցին ցցի վրայից՝ անձրևի կաթիլների պէս, ու քիչ մնաց, որ խեղդէին երկաւ փոքրիկ բզէզի, որոնք մտածում էին բաւն գտնել ու ապրելու համար չոր ու յարմար տեղ էին որոնում։

Ըստ երևոյթին նրա խառնուածքը ռոմանտիքական է, ասաց Հրաղաւնդը.—որովհետև նա առանց պատճառի լալիս է։ Ու նա խորը հառաչեց ու մտածեց իր եղբօրից շինած արկղի մասին։

Իսկ Հռոմէական Մոմն ու Բէնդալեան դրակը բոլորովին գայրացած, բարձրագոչ ձայնով, սկսեցին կրկնել.

— Փչում է, փչում է։

Նրանք վերին աստիճանի գործնական էին ու մի որևէ բանի դէմ առարկելիս ասում էին.

— Փչում է։

Ապա ծոցից Լուսին՝ ինչպէս մի ոքծոթէ չքնաղ վահան, ու վայլեցին աստղերը, ու պայծառից լուսից երաժշտութեան ձայնը,

Գրքնցն ու Գրիգորուհին վարում էին պարերը։ Նրանք պարում էին այնքան աքանչելի, որ բարձրահասակ, սպիտակ շուշաններըդուզտաղոի նայում էին պատուհանից ու հեռևում պարին, և կարմիր, խաշար խաշխաշները շարժում էին գլուխներն ու չափ տալիս։

Ապա զանգը խփեց տասս, ապա տասնեքսէկ, ապա՝ տասներկու, ու, կէս գիշերուայ զանգի վերջին հարուածից յետոյ, ամենքը դուրս եկան տեքրասը, և Թագաւորն ուղարկեց Պալատական Հրագէտի հետևից։

— Հրախաղը սկսէ՛ք, ասաց Թագաւորը։ Եւ Պալատական Հրագէտը խորը գլուխ տուեց ու անցաւ պարտիզի միւս ծայրը։ Նա հետը վեց օգնական ունէր, որոնցից ամեն մէկը երկար փայտի ծայրից կախուած մի—մի ջահ էր տանում։

Իսկապէս մի հոյակապ տեսարան էր։

Վը՞ր ը՞զ..., վը՞ ը՞զ... շառաչեց Հրանֆուրը, հէնց որ սկսեց պատուէր։ Բռա՞մ,... բռա՞մ... շառաչեց Հռոմէական Մոմը։ Ապա Ծաղրաճիւրը պար բռնեց հրապարակի վրայ, ու Բէնդալեան Կրակը նետրկեց ամեն ինչ կարմիր գոյնով։ «Մնաք բարո՞վ», բացականչեց Հրազունդը՝ վեր սլանալուն պէս կապոյտ կայծեր ցանելով։ Բանգ...բանգ... պատասխանեցին Պեսարդները, որոնք սաստիկ ուրախ էին։ Ամենքը մեծ յաջողութիւն ունեցան, բացի նշանաւոր Ռոկէտից։ Լաց լինելուց նա այնքան էր խոնաւացել, որ ամենևին չկարողացաւ վեր բարձրանալ։ Ամենալաւ բանը, որ կար նրա մէջ՝ վառօդն էր, ու դա այնքան էր թռչուել աքցուանքներից, որ այլևս բանի պէտք չէր։ Նրա բոլոր խեղճ ազգականները, որոնց հետ նա երբէք չէր խօսի առանց արհամարհական ժպտի, վեր սլացան երկինքը, ինչպէս չքնաղ ծաղիկներ՝ հրեղէն կոկոններով։

— Կեցցէ՛, կեցցէ՛, բացականչեց ոգ։

Պալատը։ Ու փոքրիկ Պրինցուհին հաճելքից ծիծաղեց։

— Երևի ինձ պահել են մի աւելի մեծ հանդիսի համար, ասաց Ռոկէտը։ — Անկասկած այդպէս է։— Ու նա աւելի պոռոգացաւ, քան առաջ էր։

Հետևեալ օրը բոնւորները եկան պարտէզը կարգի բերելու։

— Նոտ երևոյթին պատդամաւորութիւն է, ասաց Ռոկէտը։— Ես նրանց կընդունեմ պատշաճ արժանապատուութեամբ։

Ու նա բարձրացրեց քիթը, դէմքը խոժոռեց, իբր թէ մի ինչ որ կարևոր բանի մասին մտածելիս լինի։ Իսկ բոնւորները ամենևին չնկատեցին նրան։ Մի-այն դնալիս մէկի աչքովն ընկաւ.

— Հէ՛յ, գոչեց.— սա ի՛նչ եղկելի Ռոկէտ է, ու պատի վրայից դէն ձգեց փոսը։

— Եղկելի Ռոկէ՞տ, եղկելի Ռոկէ՞տ, ասաց նա պատուելով օդի մէջ.— անկարելի՛ է։ Երևելի Ռոկէտ, ահա թէ

ինչ էր ուզում ասել։ Ծղկելի և երևելի միակերպ հնչիւն ունին, յաճախ նաև նոյն իմաստը։

Ու նա ընկաւ տղմի մէջ։

— Այնքան էլ յարմար տեղ չէ պատեղ, նկատեց նա.— սակայն, անկասկած, մի որևէ նորաձև լոգարան է սա, ու ինձ ուղարկել են այստեղ, որ առաղջութիւնս կապրուրեմ։ Զղերս, իսկապէս, շատ են քայքայուել, ու ես հանգստի կարիք ունիմ։

Ցանկարծ ջրի տակից նրա առաջը դուրս եկաւ փայլուն, գոհար աչքերով ու կանաչ բրծաւոր մորթով մի փոքրիկ Գորտ։

— Ի՞նչ եմ տեսնում։ Նորեմ, ասաց Գորտը.— ինարկէ, վերջ ի վերջոյ տղմից լաւ բան չկայ։ Տուէ՛ք ինձ անձրևայինն եղանակ ու մի լճակ, և ես երջանիկ կըլինեմ։ Դու կարծում ես այս երեկոյ անձրևայի՞ն կլինի։ Ես հաճոյուած եմ, որ այո՛, ես յոյս ունիմ, քայլ ապիտոս, որ երկինքը միջանգամայն կապոյտ է ու ամպամած։

— Ըհը՛մ, ըհը՛մ... ասաց Ռոկէտան ու սկսեց հազալ։

— Ի՞նչ անուշ ձայն ունիս, բացականչեց Գորտը։—Ուզգակի կռկռոցի է նման, իսկ կռկռոցն ինքնին ամենաերաժշտական հնչիւնն է աշխարհիս երեսին։ Այս երեկոյ դու կլաս մեր համերգը։ Մենք նստում ենք ագարակատիրոջ տան կից բաղերի հին լճակի մէջ, ու Լուսինը ծագելուն պէս՝ սկսում մեր համերգը։ Դա այնքան զմայլիչ է, որ ամենքն արթնանում են մեզ լսելու։ Իրօք, դեռ երէկ էր, երբ ես լսեցի թէ ինչպէս ագարակատիրոջ կինն ասում էր իր մօրը, որ ամբողջ գիշերը մեր պատճառով աչքը չի կպցրել։ Շատ հաճելի է, երբ մարդ այդպիսի մեծ ժողովրդականութիւն է վայելում։

— Ըհը՛մ, ըհը՛մ, բարկացած ասաց Ռոկէտը։ Նա շատ վշտացել էր, որ չկարողացաւ մի խօսք ասել։

— Իսկապէս, ի՞նչ անուշ ձայն է, շարունակեց Գորտը։—Ցոյս ունիմ, որ կը

գաս բաղեքի լճակը։ Ես գնում եմ աղջիկներս որոնելու։ Ես վեց հատ չքնաղ աղջիկ ունիմ, ու վախենում եմ՝ մի գուցէ Գայլաձուկը պատահի նրանց։ Կատաղած հրէշ է նա, ու անտարակոյս աղջիկներիցս նախաճաշ կսարքի իր համար։ Դէ՛հ, ցտեսութիւն։ Հաւատացնում եմ քեզ, որ մեր զրոյցից ես մեծ հաճոյք ստացայ։

— Զրո՞յց, ինչպէ՞ս չէ, ասաց Ռոկէտը.—Շարունակ դու ինքդ քեզ հետ խօսեցիր։ Դա զրոյց չէ։

— Լսող պիտի լինի՞, թէ ոչ, պատասխանեց Գոքարը։—Ես սիրում եմ ի՛նքս մի՛շտ խօսել։ Դա խնայում է ժամանակը և վիճաբանութեան տեղիք չի տալիս։

— Իսկ ես սիրում եմ վիճաբանել, ասաց Ռոկէտը։

— Չկարծեմ թէ, քաղաքավարի ասաց Գոքարը.—վիճաբանութիւնը վերին աստիճանի գռեհիկ բան է, որովհետև բուհատարակութեան մէջ բոլորն էլ միևնոյն կարծիքն ունին։ Ցտեսութի՛ւն, կրկին։

Հեռուից հեռու ես արդէն տեսանում եմ աղջկներին։ Ու փոքրիկ Գորտը լոզալով գնաց։

— Դու շատ զրգռիչ անձնաւորութիւն ես, տատց Ռոկէար։— և շատ էլ անկիրթ։ Ես տատում եմ նրանց, որոնք, —այն ժամանակ, երբ մէկը ուզում է խօսել քո մասին, ինչպէս օրինակ ես,— խօսում են իրենց մասին, ինչպէս օրինակ դու։ Դրա անուն ես դնում եմ՝ եսասիրութիւն, իսկ եսասիրութիւնը՝ զզուելի բան է, մանաւանդ իմ խառնուածքն ունեցողի համար, որովհետև ես շատ յայտնի եմ իմ կարեկից բնաւորութեամբ։ Իսկն ասած, դու ինձանից օրինակ պիտի վերցնեաս։ Ինձանից լաւ տիպար չես գտնի։ Այժմ, քանի որ առիթը կայ, լաւ կլինէր, եթէ օգտուէիր, որովհետև ես շուտով վերադառնալու եմ Պարտատ։ Պալատում ես շատ սիրելի անձնաւորութիւն եմ։ Իսկն ասած, էրէկ Պրինցն ու Պրինցուհին պատկուեցին իմ պատիւ ինձ։ Իհարկէ, այդ մասին դու

ոչինչ չդիտես, որովհետև գաւառում ես ապրում։

— Զուր ես հեռը խօսում, ասաց մի ծպուռ, որ նստել էր դարչնագոյն եղէգի վրայ։—Մխանգամայն ի դուր, որովհետև նա արդէն գնացել է։

— Է՛հ, ինքը կասուծի, ոչ թէ ես, պատասխանեց Ռոկէտը։ Մի լեռնոյն է, ես չէ-պիտի լռեմ միայն նրա համար, որ նա ուշադրութիւն չի դարձնում։ Ես սիրում եմ ինքս ինձ լսել։ Դա իմ ամենամեծ հաճոյքներից մէկն է։ Յաճախ ինքս ինձ հետ ես զրոյց եմ անում, ու ես այնքան խելօք եմ, որ երբեմն ասածներից մի խօսք անգամ չեմ հասկանում։

— Այն ժամանակ դու անպատճառ դատախօսութիւն պիտի կարդաս Փիլիսոփայութիւնից, ասաց ծպուռը։ Եւ պարզելով իր շղարշանման չքնաղ դոյգ թեւերը՝ սլացաւ դէպի երկինքը։

— Ինչ մեծ չիմարութիւն արաւ, որ չմնաց այստեղ, ասաց Ռոկէտը,—հաստատած եմ, որ իր միտքը կատարելա-

գործերս այսպիսի առիթ նա միշտ չի առնեիս։ Ցամաքայն դէպս դու իմ բանը չէ։ Հանեցարը, ինչպիսին իմն է, անկասկած մի օր կգանի իր գնահատութիւնը։ Ու նա խորասուզուեց տղմի մէջ աւելի ևս։

Մի փոքր անց լոյսց դէպի նա մի մեծ Սպիտակ Բարդ։ Նրա ոտները դեղին էին, թաթիկները՝ թաղանդով ծածկուած, և իր երերուն քայլուածքի համար դեղեցկուհի էր համարուում։

— Դա՞ դ, դա՞ դ, դա՞ դ... ասաց նա։ —Ի՞նչ տարօրինակ կերպարանք ունիս։ Չի՞ կարելի հարցնել՝ դու այդպէս ես ծնուա՞ել, թէ դժբաղդ պատահարից է։

— Իսկոյն երևում է, որ դէպ տեղ ես ապրել, պատասխանեց Ռոկէտը,—թէ ոչ իսկոյն կիմանայիր, թէ ո՛վ եմ ևս։ Ցամենայն դէպս ես ներում եմ քո տգիտութիւնը։ Ի դուր կլինեիր սպասել, որ ուրիշներն էլ մեզ պէս նշանաւոր լինեն։ Անկասկած դու պիտի զարմանաս, երբ լսես, որ ես կարող եմ թռչել մինչև եր-

կինքն ու լեռ պոլ՝ ոսկէ ամրձրեալ տարրաւոր պէս։

— Ինչի՞ է պէտք, ասաց Բաղբ,— երբ ոչ ոք դրանից շահ չունի. եթէ դու կարողանայիր հեռկել գաշտը՝ եղան պէս, կամ քաշել սայլը՝ ձիու պէս և կամ հրակել ոչխարը՝ հօտի շան պէս, բանի նման կլինէր։

— Սկբու՛ն աքարած, բացականչեց Ռոկէտը գոռոզաբար.—Ես տեսնում եմ, որ դու ծագումով ստոր դասակարգից ես։ Նա, ով իմ դիրքն չունի, երբէք շահաւէտ չի լինում։ Մենք ունինք մի շարք կատարելութիւններ, և դա աւելի քան բաւական է։ Սա՛ ինքս, ոչ մի արհեստի ձգտում չունիմ, ես տաւել մի այնպիսի արհեստի, ինչպիսին դու ես ինձ յանձնարարում։ Իսկապէս ես միշտ այն կարծիքին եմ եղել, որ ծանր աշխատանքն ապատատրան է նրա՛նց համար, որոնք միանգամայն անդործ են։

— Լա՛ւ, լա՛ւ, ասաց Բաղբ, որը վերջին ատենների խաղաղասէր էր և ոչ

ոքի հետ չէր վիճաբանելն մարդ շոկ ճաշակի տէր է։ Ցամենայն դէպս ես յոյս ունիմ, որ քո բնակատեղին այստեղ կըլնի։

— Օ՛, Ասուած ո՛չ անի, բացականչեց Ռոկֆոր.—Ես այստեղ լոկ հիւր եմ, մի եբևելի հիւր։ Բանն այն է, որ այստեղ բաւականին ձանձրալի է։ Ոչ հասարակութիւն կայ և ոչ էլ առանձնութիւն։ Կատարեալ մի արուարձան է։ Հաւանականաբար կվերադառնամ Պարիզը, որովհետև ես դիտեմ, ինձ վիճակուած է աշխարհում մեծ անուն հանել։

— Մի անգամ ես էլ մտածեցի հասարակական գործերով զբաղուել, նկատեց Բադը,—նորոգելու կարիք շատ բան կայ։ Անցեալներիդ մի միտինգում նոյն իսկ նախագահութիւն էլ արի և ամեն բանի դէմ, ինչ մեր դուրը չէր գալիս, դատապարտութեան ռէզոլիւցիաներ անց կացրինք։ Սակայն քաղաքացիներս այլ ամենը ոչ մի ազդեցութիւն չունե-

յաւ։ Այժմ ես անակնաց եմ դառել և իմ բնաւորութեան պէտքերն եմ հոգում։

— Ես սահմանուած եմ հասարակական կեանքի համար, ասաց Ռոկէտը.— այդպէս են և իմ բոլոր ազգականները, մինչև անգամ ամենից նուաստագոյնները։ Ուր էլ մենք երևալու լինինք՝ միշտ մեծ ուշադրութեան ենք արժանանում։ Ինքս դեռ ինչպէս հարկն է երևան չեմ եկել, իսկ երբ երևան գամ, մի անուան տէր կլինի։ Այն ինչ անալին կեանքը մարդուս արագ կերպով ծերացնում է ու մտքիցը բարձր գաղափարները խլում։

— Ա՜խ, կեանքի բարձր գաղափարները, ի՜նչ սքանչելի բան է, ասաց Բաղը.— ու լիշեցնում է ինձ, թէ որքա՜ն ես սոված եմ։

Ու նա հոսանքով դէպի վար լողաց՝ կրկնելով.

— Ղա՜դ, դա՜դ, դա՜դ...

— Կա՛դ, կա՛դ, ճչաց Ռոկէտը.— ես դեռ շատ բան ունիմ քեզ ասելու։ Իսկ Բաղն ուշադրութիւն չդարձրեց։— Ու-

բախ եմ, որ նա դնայ, սակայն նա ինքն իրեն.— Նա քաղքենու պատուղությունն ունի։— Ու նա աւելի ևս խորասուզուեց ապմի մէջ ու սկսեց մտածել հանեցարի մենակութեան մասին, երբ յանկարծ ապտակ հարուած երկու փոքրիկ ապայ լճակի ափն իջան՝ մի կաթոյ ու մի քիչ էլ ցախ հեռուներից։

— Երեխի պատդամաւորութիւն է սակայ Ռոկէտն ու իրեն արժանապատիւ տեսք տուեց։

— Հէ՞յ, բացականչեց տղաներից մէկը.— Նայէ՛ք այս հնամաշ ձողին։ Զարմանալի է, ո՞րտեղից է այստեղ քնկեր։ Ու հանեց Ռոկէտը լճակի միջից։

— Հնամա՞շ ձող, սակայ Ռոկէտը.— անկարելի՛ է։ Ոսկէտա՛շ ձող, սեռ ի՞նչ սակայ։ Ոսկէտաշ ձող՝ շատ հաճելի է։ Իսկն սակայ նա ինձ շքոմիս է մի որևէ բարձրատեսիան պալատականի հետ։

— Արի կրա՛կը ձգենք, սակայ մեզ տրգաս.— Հրամիրատեսն սակայ շուտ հետ հրդայ

Նրանք թռուփ արին բերած ցախը, վրան դրին Ռոկէան ու կրակը վառեցին։

— Հիանալի է, բացականչեց Ռոկէան.—ուզում են ինձ օրը ցերեկով արձակել, այնպէս որ ամենքն ինձ կտեսանեն։

— Հիմա գնա՛նք քնելու, ասացին տղաները,—և երբ քնից արթնանանք՝ կաթսան արդէն եռ. եկած կլինի։

Եւ նրանք պառկեցին խոտի վրայ ու փակեցին աչքերը։

— Հիմա ես կրարձրանամ վեր, բացականչեց Ռոկէան ու ցցուեց.—զգուեմ, որ ես աւելի բարձր պիտի թռչեմ, քան ամենքը, աւելի բարձր՝ քան լուսինը, ու աւելի բարձր՝ քան արևը։ Իրօք, ես այնքա՞ն բարձր պիտի թռչեմ, որ...

— Վը՞զ, վը՞զ, վը՞զ... ու սկսաւ նեռի պէս դէպի վեր։

— Ս քանչելի՛ է, բացականչեց նա.—այսպէս պիտի թռչեմ յաւէտ։ Ինչպիսի՜ յաջողութիւն։

Բայց նրան ոչ ոք չտեսաւ

Ցեռոյ նրա մարմնով մի տարօրինակ տարուբերում անցաւ։

— Հիմա կպայթեմ, բացականչեց նա. — ես պիտի հրաբխեմ ողջ աշխարհն ու այնպիսի ադմուկ հանեմ, որ ամբողջ տարին այլևս ուրիշ նիւթի մասին չխօսեն։

Ու իսկապէս պայթեց։ Բա՜մ, բա՜մ, բա՜մ... ճայթեց վառօդը։ Կասկած չկար՝ վառօդն էր։

Բայց նրան ոչ ոք չլսեց, և ոչ էլ, մինչև անգամ, երկու փոքրիկ տղան, որովհետև նրանք քաղցը քնի մէջ էին։

Ու այդ բոլորից յետոյ միայն նրա ձողը, որ քնկաւ լճակի շուրջը ընթացող մի Սագի մէջքի վրայ։

— Տէր Աստուած, բացականչեց Սագը.— հիմա էլ սկսել է ձողի անձրև գալ։

Ու սուզուեց ջրի տակը։

— Զաստցի՛, որ մեծ ադմուկ պիտի հանեմ, շշնջաց Ռոկէան ու հանգաւ։

-300-

ՀՀ Ազգային գրադարան
NL0836072

Ա 92
108

Գին՝ 30 դրամ.